

ԵԼՈՒՄ

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ ՕԾՎԵԳ ԵՒ ՎԵՐԱՏԵՂԱԴՐՎԵԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻ ԳՄԲԵՅԻ ԽԱՅՐ

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ



«Աստվածահաստատ Սուրբ Էջմիածինը Աստծո պարգևն է մեր ժողովրդին Իր Միածին Որդու Էջըով»:
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ

«Գոհամամք զՔԷՆ, Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ Սուրբ զԵԿԵՂԵԳԻ, տաճար սրբութեան, ուր փառաբանի Սուրբ Երրորդութիւնը»:
Պատարագամատուց

համար որպէս նավահանգիստ Սուրբ Եկեղեցին, տաճարը սրբութեան, որտեղ փառաբանվում է Սուրբ Երրորդութիւնը»:

Աստվածահաստատ Սուրբ Էջմիածինը Աստծո պարգևն է մեր ժողովրդին Իր Միածին Որդու Էջըով՝ որպէս Երկնավորի անհուն սիրո վկայություն հանդէպ մեր ժողովրդը: Մարդկության Փրկիչը իջավ հայոց աշխարհ՝ ի տես Սուրբ Գրիգոր Լուսավորչի, եւ ցույց տվեց հայոց սրբազնաստուր Մայր տաճարի կառուցման վայրը: Բիբլիական Արարատի դիմաց վեր հանեց հայոց աստվածաշնորհ տաճարը՝ Լուսավորիչ Հայրապետի, Հայոց Տրդատ արքայի եւ հավատացյալ ժողովրդի ջանքերով: Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ եղավ եւ այսօր էլ է ու միշտ պիտի լինի այն ամուր վեմը, որի վրա խաչսլաված է հայոց հավատքը, որով կերտվել է հայոց ինքնությունը, ու վերակերտվել հայոց պետականությունը: Արդարեւ, Էջմիածինն է մեր ժողովրդին ազգային արժեքներով միաբան պահպանել եւ առաջնորդել դեպի հայրենի անկախության նոր հորիզոններ: Քրիստոսահիմն ոսկեխարիսխ Սուրբ Էջմիածինը այն նավահանգիստն է, որտեղ դարերի արհավիրքներից ու լաւեկոծություններից խաղաղություն է գտել հավատավոր մեր ժողովուրդը, հույսով առատացել, հաղթանակի նոր ուժ ու զորություն առել: Այստեղ է Ավարայրի, Մարդարապատի, արցախյան ազատամարտերի հաղթության ոգին զորացել, այստեղ են Հայոց ցեղասպանությունից մազապուրծ բազում գաղթական հայորդիք օգնություն ստացել, միախառնվել սփոփվել եւ նոր կյանքի ավիշով լցվել: Էջմիածին Մայր տաճարը Տիրոջ դրոշմն է հայոց հողում, հայոց կյանքում եւ հայոց հոգիներում, որի երկնառաք անմար լույսը ծառագում է աշխարհասփյուռ մեր բոլոր եկեղեցիներից: Այն թանկագին մարգարիտ է, որը միշտ պիտի շողա որպէս հոգեւոր գանձ մեր բարեպաշտ ժողովրդի հավատքի անդաստանում:

Շարունակությունը՝ էջ 2

Նոյնիսի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Արարատյան տոմարի շաբաթը պսակող Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տոնը:

Տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Պատարագ մատուցվեց Ս. Տրդատ Գ հայոց արքայի անունը կրող բաց խորանին: Պատարագիչն էր Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն Եսայ Միրզախանյանը, որն իր քարոզում անդրադարձ կատարեց Միածնաեջ Մայր տաճարի հիմնադրման խորհրդին եւ կարեւոր նշանակությանն ու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում:

Տոնի բերկրանքը հավելվեց մեկ այլ նշանակալի իրադարձությանը: Նկատի առնելով, որ Միածնաեջ Մայր տաճարի ամրակայման աշխատանքների հերթական փուլի ավարտի արդյունքում ամբողջությամբ հիմնանորոգվել էր տաճարի գմբեթը, Պատարագի ավարտին կատարվեց տաճարի գմբեթի նորակերտ խաչի օծման արարողությունը: Տաճարի հին խաչը, որը վնասվել էր ժամանակների ներգործության պատճառով, իր մշտական հանգրվանը կգտնի Մայր Աթոռի թանգարանում:

Բաց խորանի առջեւ, ըստ ընկալյալ կարգի, նախ՝ սաղմոսների ներքո գինով եւ ջրով լվացվեց խաչը, ապա՝ սուրբգրային ընթերցվածքներից ու աղոթքներից հետո, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբալույս մյուռնով օծեց այն:

Տոնի առիթով, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, նաեւ կատարվեց Սուրբ Էջմիածնի մաղթանքը:

Հոգեւոր դասը եւ ներկա բարեպաշտ հայորդիները միասնաբար աղոթք բարձրացրեցին առ Բարձրյալն Աստված Հայոց Ընդհանրական Մայր Աթոռի՝ Սուրբ Էջմիածնի անասանության ու պայծառության, աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում նրա սրբազան առաքելության հարատեւ իրականացման համար:

Այնուհետեւ նորած խաչի առջեւ Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց ներկաներին եւ համայն մեր ժողովրդին՝ Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տոնի եւ Մայր տաճարի գմբեթի խաչի օծման ուրախալի առիթով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքի ավարտին ծաղիկներով զարդարյալ օծված խաչը հանդիսավոր թափորով տարվեց Մայր տաճարի առջեւ, որտեղից ներկաների գոհաբանական մաղթանքների եւ շարականների երգեցողության ներքո կոռնկով բարձրացվեց եւ տեղադրվեց տաճարի գմբեթին:



Սիրելի հավատավոր զավակներ Մեր, Այսօր Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի հիմնադրության հիշատակի օրն է: Այս նշանակալի տոնի բերկրանքը մեր սրտերում սրբալույս մյուռնով օծեցինք նորակերտ այս խաչը, որը քիչ հետո, միասնական գոհաբանությամբ ու փառաբանությամբ առ Աստված, պիտի վերատեղադրվի համայն հայության սրբությունը սրբոց աստվածակառույց Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի գմբեթին: «Գոհություն ենք հայտնում Քեզ, Հայր ամենակալ, որ պատրաստեցիր մեզ

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նունիսի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել երկրորդ Մայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Ժողովի օրակարգում ընդգրկված էին համավարակի կանխարգելմանն ուղղված քայլերին, հոգեւոր կրթական հաստատություններին, Մայր տաճարի հիմնամորոգության ընթացքին եւ ազգային-եկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

Համավարակի ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ թեմերի կողմից հայրենիքում իրականացվող սոցիալական աջակցության լայնածավալ ծրագրերի մասին զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քին. Մանգասարյանը: Տեղեկացվեց, որ Մայր Աթոռի միջոցներով, Սփյուռքի թեմերից, բարերարներից եւ հիմնադրամներից ստացված գումարներով ծրագրեր են իրագործվել սոցիալական, առողջապահական եւ կրթական ոլորտներում, որոնց մասին պարբերաբար պատշաճ կերպով իրազեկվում է հանրությանը: Ծանուցվեց Վեհափառ Հայրապետի մասնավոր տնօրինությամբ Լիբանանի եւ Սիրիայի հայ համայնքներին ցուցաբերված զորակցության մասին:

Գերագույն հոգեւոր խորհուրդը գնահատանքով ողջունեց կատարված աշխատանքները՝ կարելուրելով առկա դժվարին պայմաններում կարիքավոր ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը, ինչպես նաեւ առողջապահական եւ կրթական ոլորտում ՀՀ կառավարությանը բերած օգտակարությունը: Ժողովականները քննարկեցին նաեւ ծրագրերի հետագա ընթացքին վերաբերող հարցեր:

Ժողովի ընթացքում լսվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի զեկույցը՝ Մայր տաճարի հիմնամորոգության եւ ամրակայման աշխատանքների ընթացքի մասին: Սրբազանը տեղեկացրեց, որ պայմանավորված համավարակով՝ աշխատանքները դադարեցվել էին եւ վերսկսվեցին միայն վերջերս: Ծանուցվեց, որ ավարտին են մոտեցել տաճարի կենտրոնական գմբեթի աշխատանքները, արդյունքում հունիսի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց գմբեթի նորակերտ խաչի օծման եւ տեղադրման արարողությունը: Ամբողջապես ավարտվել է զանգաշտարակների նորոգումը, ընթանում են զանգաշտարակ տան ամրակայումն ու հիմնամորոգումը եւ տաճարի հիմքերի ջրամեկուսացումը: Չուգահեռաբար իրականացվում է Մայր տաճարի շրջակա տարածքի բարեկարգումը:

Սուրբ եպիսկոպոսի իրազեկմամբ, շինա-



րարական աշխատանքներին զուգընթաց, ճարտարապետների կողմից կատարվում են նաեւ ամհրաժեշտ ուսումնասիրություններ: Արդյունքում ի հայտ են եկել նոր խնդիրներ՝ կապված արեւմտյան մուտքին հարակից իյուսիսային եւ հարավային թաղածածկերի հետ, որոնք պետք է ամբողջապես վերակառուցվեն: Ամհրաժեշտ լուսաբանություններ տրվեցին նաեւ տաճարի արտաքին եւ ներքին լուսավորության, ծայնային, ինչպես նաեւ տեսագրման ու հեռարձակման համակարգերի տեղադրման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին:

Մասնավոր քննության առարկա դարձավ տաճարի որմնակարների ուսումնասիրման եւ վերականգնման խնդիրը: Այդ առնչությամբ տեղեկացվեց, որ աշխատանքը ժամանակատար է, քանի որ ենթադրում է որմնակարների առանձնացում ծեփերից, իսկ շինաշխատանքների ավարտին վերատեղադրում եւ նորոգություն:

Ժողովականներին Մուշեղ եպիսկոպոսի կողմից նաեւ ամփոփ տեղեկություններ փոխանցվեցին Մայր տաճարի հիմնամորոգման համար ամհրաժեշտ միջոցների հանգանակության ընթացքի, հանգանակության կազմակերպման աշխատանքային հանձնախմբի գործունեության մասին: Ծանուցվեց, որ պայմանավորված ներկա իրավիճակով՝ հանգանակությունների գործընթացը կանգ է առել, եւ առ այսօր հավաքագրվել է նորոգության համար ամհրաժեշտ գումարի մեկ երրորդը:

Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին առնչվող հարցերով

աշխատանքային խմբի գործունեության վերաբերյալ զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը՝ ամփոփ տեղեկություններ փոխանցելով աշխատանքային թեմատիկ հինգ ենթախմբերի հանդիպումների արդյունքների մասին: Նշվեց, որ աշխատանքային խմբի աշխատանքներն ընթացքի մեջ են, եւ առաջադրված հարցերը քննարկումների փուլում են:

Անդրադարձ կատարվեց նաեւ շաբաթներ առաջ ՀՀ կառավարության անունից մամուլում հրապարակված տեղեկանքին, որտեղ արձանագրված էին աշխատանքային խմբում քննարկված հարցերի շուրջ տարբեր գերատեսչությունների մոտեցումները: Այս առնչությամբ դիվանապետ սրբազանը հայտնեց, որ Մայր Աթոռում աշխատանքային խմբի՝ Եկեղեցու կողմից ներկայացված անդամների եւ ենթախմբերի եկեղեցական համակարգողների մասնակցությամբ տեղի ունեցած հանդիպման արդյունքում քննարկված հարցերի շուրջ պատրաստվել է Մայր Աթոռի դիրքորոշումներն ամփոփող տեղեկանք, որն օրեր առաջ առաքվել է ՀՀ կառավարությանը:

Գերագույն հոգեւոր խորհուրդն իր հերթին քննության առավ խնդրո առարկա հարցերը՝ թելադրելով շարունակել հետետողական աշխատանք տանել առաջադրված խնդիրների կարգավորման ուղղությամբ:

Մայր Աթոռի հոգեւոր բարձրագույն հաստատությունների կրթական գործընթացի մասին զեկույցով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Մեսրոպ վրդ. Պարսամյանը:

Հայր սուրբը տեղեկացրեց, որ համավարակի պայմաններում ճեմարանը շարունակել է իր կենսագործունեությունը. կազմակերպել է հեռավար ուսուցումը՝ ավարտին հասցնելով ուսումնական տարին: ԳՀԽ-ի անդամներին տեղեկություններ փոխանցվեցին նաեւ այս ընթացքում ճեմարանի ընդունելության կազմակերպման ընթացակարգի վերաբերյալ՝ ճշելով, որ մասնավոր աշխատանք է տարվում ընդունելության տարիքային շեմը բարձրացնելու եւ պարտադիր զինվորական ծառայությունն անցած երիտասարդներին ճեմարան ընդունվելու հնարավորությունն ընձեռելու համար: Ժողովականները կարելուր նկատեցին, որ ճեմարանի տեսչության կողմից հայաստանյան եւ սփյուռքյան թեմերում լրացուցիչ աշխատանքներ տարվեն երիտասարդ հայորդիներին հրավիրելու ճեմարան ուսումնառության:

Իր խոսքում ճեմարանի տեսուչն անդրադարձ կատարեց ուսումնական գործընթացի վերակազմակերպման աշխատանքներին, որով վերատեսության կենթարկվի նաեւ ուսումնական ծրագիրը: Տեղեկացվեց, որ համավարակի առկա իրավիճակում ճեմարանի ուսումնական գործընթացը նոր ուսումնական տարում կկազմակերպվի Սեւանի Վազգենյան հոգեւոր կաթանոցում:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները մեծապես կարելուրեցին ապագա եկեղեցականների պատրաստության առաքելությանն ուղղված ջանքերը՝ հորդորելով արդյունավորությանը, ժամանակի պահանջներին համահունչ շարունակել հոգեւորականների նոր սերնդի կրթությունն ու դաստիարակությունը:

Ի թիվս վերոբերյալ հարցերի՝ անդրադարձ կատարվեց հայրենական կյանքին, համավարակի պայմաններում Սփյուռքի համայնքների ու թեմերի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ եկեղեցականների հոգեւոր սպասավորությանն առնչվող տարբեր խնդիրներին:

Վերջում Նորին Սրբություն Գաբրիել երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ժողովականներին օգտաշատ քննարկումների համար: Վեհափառ Հայրապետը կարելուր նկատեց դժվարին այս ժամանակաշրջանում եկեղեցու կողմից ժողովրդին ցուցաբերվող զորակցությունը: Նորին Սրբությունն ընդգծեց, որ Մայր Աթոռը շարունակելու է հորդորել եկեղեցականներին իրենց օգտակարությունը բերել ինչպես հայրենիքի, այնպես եւ հայոց Սփյուռքի առջեւ ծառացած մարտահրավերների դիմագրավման եւ ազգային միասնականության ոգու զորացմամբ առկա խնդիրների հաղթահարման համար:

Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տնին օծվեց եւ վերափոխվեց Մայր տաճարի գմբեթի խաչը

Սկիզբը՝ էջ 1

«Ուրախ եղիր, Սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս՝ Արքան երկնից, քեզ պսակեց իր խաչով»:

Սիրելիներ, Էջմիածնամկեր ու եկեղեցատեր մեր բարերարների սրտաբուխ նվիրատվություններով, աշխարհասփյուռ Մեր զավակների ազնիվ հանձնառություններով վերանորոգվող Մայր տաճարն այսօր պայծառանում է սուրբ խաչի պսակումով: Մենք հավատում ենք, որ Սուրբ Էջմիածնի տաճարի բարձունքից ճառագող Տիրոջ Սուրբ Խաչի զորությունը պիտի պարգևի մեր ժողովրդին ուժ ու կորով՝ վեր հանելու դժվարություններից, հաղթահարելու համավարակի փորձությունը եւ նոր օրհնություններով ու ձեռքբերումներով շարունակելու իր ստեղծարար կյանքը: Խաչը նշան է դժվարությունների ու փորձությունների դիմագրավումով հաղթության, խաչը առհավատչյան է մեր միաբանության ամրապնդման, խաչը Քրիստոսի ներկայությունն է մեր մեջ, եւ խաչով Փրկիչը զորակից է ու ապավեն աստվածատեր ազգիս հայոց: Մենք այսօր խաչապսակ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարով, մեր Սուրբ Եկեղեցիով այդ զորության, այդ հաղթության կրողներն ենք: Չթերանանք ու չտկարանանք Միածնաէջ մեր անգին սրբավայրի հանդէպ մեր սերն ու նվիրվածությունն արտահայտելու մեջ, քանզի մեր բարեպաշտ հայրերի շուրթերով օրհնված են բոլորը, ովքեր բարի հիշատակ ունեն Սուրբ Էջմիածնում: Լինենք միավորված ու համերաշխ՝ մեր հայրենիքի հզորացման, մեր ազգային երազանքների իրականացման, մեր լուսավոր գալիքը կերտելու համար:



Հոգեւորոգ այս առիթով վերստին հայրական Մեր սերն ու հայրապետական բարձր գնահատանքն ենք բերում մեր բոլոր երախտարժան բարերարներին, որոնք սրտաբուխ նվիրատվություններով վկայում են մեր Սուրբ Եկեղեցու եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ իրենց որդիական ջերմ սերը: Մայր տաճարի նորոգությունը հոգեւոր ուրախություն ու մխիթարություն է ինչպես հայրենաբնակ հայորդիների, այնպես էլ Սփյուռքի Մեր զավակների համար: Հայրապետական օրհնությամբ բարձրորեն գնահատում ենք

Մեր բոլոր զավակների զոհողությունն ու ազնիվ մասնակցությունը հայոց հոգեւոր կենտրոնի, քրիստոսաէջ Մայր տաճարի հիմնամորոգման ու պայծառազարդման աստվածահաճո գործում: Մեր բարձր գնահատանքն ենք բերում հանգանակության հանձնախմբի անդամներին, Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդին եւ ճարտարապետական բաժնի աշխատակիցներին, «Հորիզոն 95» շինարարական կազմակերպությանը, բոլոր վարպետներին, շինարարներին ու մասնագետներին, որոնք

շարունակում են ջանասիրաբար աշխատել՝ օր առաջ մեր սրբազան աղոթավայրի դռները բացելու հավատավոր ժողովրդի առջեւ: Հիմնամորոգման աշխատանքները, որ կտեսնեն շուրջ մեկ եւ կես տարի, վստահ ենք, հաջողությամբ պիտի ավարտվեն, եւ շուրջով նորոգված ու զեղեցկազարդ մեր սրբազան աղոթավայրի կամարների ներքո պիտի շարունակվեն աստվածային օրհնություններ ու շնորհներ բաշխվել հավատավոր Մեր ժողովրդին եւ բոլոր ուխտավորներին: Համազգային մասնակցությամբ Մայր տաճարի նորոգությունը Մեր հավատավոր զավակների միասնականության, մեր սրբությունների ու արժեքների շուրջ համախմբվածության վկայություններից է:

Սիրելիներ, այս տոնական օրը վերստին հայցենք Բարձրյալն Աստծո զորակցությունը, որ շուտափույթ հաղթահարենք համավարակի ճգնաժամը եւ սիրով ու համերաշխությամբ ընթանանք դէպի ազգային-եկեղեցական կյանքի նոր առաջընթաց: Աղոթենք, որ Աստված խաղաղություն ու շինություն շնորհի աշխարհին, բարօրություն, ապահովություն պարգեւի մեր հայրենիքին եւ իր երկնառաք բյուր օրհնություններն ու զորակցությունը համայն մեր ժողովրդին: Շարականագրի «Եկալք շինեսցուք սուրբ գխորանն լուսոյ» կոչին համահունչ՝ համայն ազգիս ջանքերով, անկախ պետականության հովանու ներքո թող միշտ շեն լինի Մայր Աթոռը, հավետ շողարձակի լույսը Սուրբ Էջմիածնի, եւ պայծառ ու անսասան մնա քրիստոսահիմն Մայր տաճարը՝ ի վայելումն ազգիս հայոց եւ ի փառս Ամենասուրբ Երրորդության. ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հեռակառով հանդիպում ունեցավ Եվրոպայի հայոց առաջնորդների հետ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հունիսի 24-ին հեռակապով հանդիպում ունեցավ Եվրոպայի երկրների Հայոց Եկեղեցու թեմակալ առաջնորդների, հայրապետական պատվիրակների եւ առաջնորդական տեղապահների հետ:

Հանդիպմանը մասնակցում էին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Խաժակ արք. Պարսամյանը, Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակ Տիրան եպս Պետրոսյանը, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Հովհաննիսյանը, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ եւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տաթև եպս Հակոբյանը, Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Սերովբե եպս Իսախանյանը, Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ Վարդան եպս Նավասարդյանը, Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Գուսան վրդ. Ալեքսանյանը եւ Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Խորեն վրդ. Առաքելյանը:

Իր հայրական օրհնությունն ու բարեմադրանքները բերելով Եվրոպայի հայկական

Եկեղեցական կառույցները ներկայացնող հոգեւորականներին՝ Վեհափառ Հայրապետը կարեւորեց մնալ հանդիպումների պարբերաբար անցկացումը: Նորին Սրբությունը ողջունեց ժամանակակից տեխնոլոգիաների գործածությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայոց Հայրապետի հետ առցանց կապ հաստատելու այս հնարավորությունը՝ վստահություն հայտնելով, որ այն մեծապես պիտի նպաստի հոգեւոր առաքելության առավել արդյունավետ իրագործմանը, Եկեղեցուն հուզող հարցերի շուրջ քննարկումների ծավալմանը եւ փորձառության փոխանակմանը: Հայրապետն օգտակար նկատեց Հայ Եկեղեցու ավանդույթների ու կանոնների շուրջ թեմերի վարչականների ու հոգեւոր սպասավորների գիտելիքների խորացման նպատակով առցանց զանազան ուսուցողական ծրագրերի կազմակերպումը, որոնց իրագործման հարցում կարող են իրենց նպաստը բերել Մայր Աթոռի միաբաններն ու պաշտոնեությունը:

Հանդիպմանը քննարկվեցին Եվրոպայի հայ համայնքներին, Եկեղեցական կյանքին եւ առկա իրադրության մեջ Եկեղեցականների հովվական առաքելությանն առնչվող մի շարք հարցեր: Թեմակալ առաջնորդ-

ները Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեցին ներկա իրավիճակի, համավարակի կանխարգելման եւ հետեւանքների հաղթահարման ուղղությամբ թեմերի եւ հայրապետական պատվիրակությունների կողմից ձեռնարկվող քայլերի մասին: Ուրախությամբ ծանուցվեց, որ առաջիկա ամսում հայկական Եկեղեցիները Եվրոպայում կսկսեն լիարժեքորեն գործել՝ պահպանելով բոլոր անհրաժեշտ կանոնները: Այս կապակցությամբ մասնավոր քննության առարկա դարձավ սուրբ Հաղորդության բաշխման ձեւի հարցը: Վերահաստատվեց, որ մինչեւ նոր տնօրինություն պետք է պահանջվի բաշխման ավանդական եղանակը՝ ապահովելով հիգիենիկ բոլոր կանոնները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկություններ փոխանցեց համավարակի պայմաններում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող սոցիալական, կրթական եւ առողջապահական ծրագրերի մասին: Այս առիթով Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց այն թեմերին, որոնք իրենց նվիրատվություններով զորակցել են Մայր Աթոռի սոցիալական աջակցության ծրագրերին, ինչպես նաեւ իրենց երկրներում կազմակերպել օժանդակություն կարիքի մեջ հայտնված հայորդիներին:

Հայոց Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց Միածնաէջ Մայր տաճարի հիմնադրության եւ ամրակայման աշխատանքների ընթացքին՝ գոհունակությամբ տեղեկացնելով հունիսի 14-ին տաճարի կենտրոնական զմբեթի խաչի օծման եւ տեղադրման մասին: Նորին Սրբությունը ընդգծեց, որ խաչի գետնդրում Տիրոջ օրհնության եւ շնորհի մշան է, հույս՝ առկա դժվարությունների հաղթահարման եւ կյանքի բնականոն ընթացքի վերականգնման:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց հոգեւոր դասին զորացնել ազգային-Եկեղեցական կյանքը թեմերում եւ պատվիրակություններում՝ նպաստելով մաքուր ազգային ինքնության անխաթար պահպանմանը եւ հայ համայնքների պայծառությանը: Հայոց Հովվապետը կարեւոր նկատեց, որ Եկեղեցականների հովվական աշխույժ աշխատանքի շնորհիվ յուրաքանչյուր հայորդի ներգրավվի համայնքային եւ Եկեղեցական կյանքում՝ այդպիսով ամրապնդելով իր կապը մաքուր Եկեղեցու, ազգի եւ հայրենիքի հետ:

**Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի**

ՑՈՐԱԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Տերյանի ծննդյան 135-ամյակի եւ մահվան 100-րդ տարելիցի առիթով

Սկիզբը՝ թիվ 2–11

Թ. Բանաստեղծական շարքերը

«Ոսկի հեքիաթ» շարքը վերադարձի երգ է դեպի կյանք: «Պարզեցի կյանքս պարզ ու խնդագին // Հավիտենություն, // Հավիտենություն», «Եվ ես հավիտյան ուրիշ եմ արդեն»:

Տերյանը անհավատալի քայլ է անում: Նույն 1912-ին գրած բանաստեղծությունների մի խտրող շարքին նույն 1912-ին հակադրում է մեկ այլ շարք.

*Բացված է արդեն մի ուրիշ երկիր,
Ես այնտեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,–
Ոսկի հայացքով կախարդել է մա,
Այլ սիրով լցրել հոգիս վշտակիր...*

Շարքի առաջին գործերում գիշերանոցն անգամ արշալույսի նման է, գարնան երեկոն տարածվում է կապույտ դաշտերում, ոսկեցողուն հայացքը լույս է վերարձակում, առում արծաթաշող է, մարգերը լուսավոր են: Ճայր են առնում սիրո երգեր, որոնք հիմա ավելի չեզոք են, հեռու են բախտորոշ ճակատագրականությունից: Ահա «Ոսկի հեքիաթի» էությանը բնորոշ գործերից մեկը.

*Չըգիտեմ՝ այս տխուր աշխարհում
Որն է լավ, որը՝ վատ,
Ես սիրում եմ աչքերըդ խոհուն
Եվ խոսքերըդ վիատ...*

*Ես սիրում եմ արտերը ոսկի
Եվ դաշտերը պայծառ,
Ես սիրում եմ խորհուրդն այն խոսքի,
Որ չասիր ու անցար...*

*Միայնակ՝ ես սիրում եմ մատել
Երերուն լույսերուն,
Ես սիրում եմ երազ ու սովեր.–
Ես իմ սերն եմ սիրում:*

Ամեն ինչ այդ սերը փրկելու, պահպանելու եւ շարունակելու համար է: Միջավայրը ջերմացնող է: Մթնշաղի կողքին մաքուր արշալույսն է, մութը ոչ թե սեւ է, այլ քմբուշ, խորհրդավոր, թափանցիկ, լուսապայծառ: Համանման տաք պատկերները շարունակվում են՝ լուսազարդ ժանյակներ, խաղացկուն ժպիտներ, ոսկեպայծառ մշուշներ: Փոխվում է մաքուր քաղաքային միջավայրը՝ «Լցվում է փողոցն աղմուկ ու շարժում, // Դալուկ դեմքերին ծաղկում է ժղպիտ» («Գարնան քաղաքում»): Բանաստեղծն օրհնության խոսք է ասում, որ մաքուր գոհություն է մշանակում: Այնաշխարհային, այնպիսի մտաբանությունները դեռեւս կան: Մեությունը կարծես չի գիտակցվում «զվարթ

ամբոխու», բայց՝ «Աղոթք եմ անում ցնորքաղջկան»:

*Եվ այնտեղ է մա,– ոչ այս աշխարհում,–
Մաքուր ու պայծառ պատկերը մրա.
Ես տառապանքս բախտ եմ համարում
Եվ ծիծաղում եմ ձեր բախտի վրա...*

Շարքի հիշարժան բանաստեղծություններից մտաբերեմք եւս մի քանիսը՝ «Երկու ուրվական», «Մահ-ցնորք», «Խորհրդավոր սեր», «Երբ կյանքը սուր փշերով...», «Իմ ցնորքին», «Կարոսել», «Շշուկ ու շրշուն», «Արեւածագ»:

Տիրությունը հիմա անուշ է, հերթական անգամ բանաստեղծն օրհնում է իր երկրային վիճակը: Չմոռանալով երազների երկինքը, սիրո երկնային թագուհուն՝ մա հիմա ոչ թե անհասանելիության եղերերգն է ձայնարկում, այլ երջանկանում է իր ստեղծած աշխարհով.

*Ես գիտեմ լուսեղեն մի երկիր,
Ես գիտեմ դյութական մի հովիտ,
Ուր հոգին թափում է վշտակիր
Իր թելերն ու հագնում է ժպիտ:*

Ցնորք-աղջկա կերպարանափոխություններից մեկն էլ մահվան դիմակն է: Մեռած

հարսնացուն այցելում է բանաստեղծին, եւ նրանց հանդիպումը վերստին տոնական է.

*Երբ մեռնում եմ ճիշերը շփոթ
Աղմուկ քաղաքի մարտկոցում,
Լուսերես մա մատում է ինձ մոտ
Ու հետս երազում ու լացում:*

«Ոսկի հեքիաթ» շարքը պայմանավորում է «Վերադարձ» շարքի ծնունդը: Առաջինն ավարտվում է «Արեւածագով» («Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին»), մյուսն սկսում է «Մեռության խավար զնդանից կրկին// Ես վերադարձա հզոր ու հպարտ...» տողերով բանաստեղծությամբ: Այստեղ «աղմկահյուս» կենդանի կյանքն է: Խոսքս չեմ ծավալում. ասեմ միայն, որ թեւեւ ներգրավում է երկու բանաստեղծություն, բայց ունի անցումային քայլի մշանակություն: Տերյանն ստեղծում է քնարական հերոսի հոգեբանական տեղաշարժերի դիպաշար:

Հաջորդը «Ոսկե շղթա» շարքն է, որ ընդգրկում է սիրո ու ծաղկունքի տրամադրություններով գրված 21 գործ, այդ թվում՝ տրիոլետների ենթաշարքը: Այստեղ ավելի բաց Տերյանն է: Ուշադրություն եմ հրավիրում երկու գործի: Մեկը կյանքի հատակը ներկայացնող իրականությունն է:

Շարունակությունը՝ էջ 5, 8

Արեւմտահայոց խաչելության պատումը



Սկիզբը՝ թիվ 8–11

Ալաջաջյանը թեև իրավացիորեն գրում է, որ հայոց գոյատևման մեծագույն զենքը «այբուբենն է, որ կենաց լույս է արձակում», այդուհանդերձ, հեղինակային ասելիքը վեպում հանգում է նրան, որ ազգային գոյատևման համար կարելու է նաեւ երկաթե զենքը, որը «մահաբեր գնդակներ է արձակում» թշնամու վրա:

Կռվելով ապրել, ապրել՝ կռիվը շարունակելու համար, մահին մահով հատուցելու համար, մեռնելու եւ ոչ թե սպանվելու համար, սա հենց այն վճռականությունն ու ազատասիրությունն է, որ վեպում ժողովրդին տանում է պայքարի: Եվ պատահական չէ, որ մայր հողն ու անտառը դառնում են ֆնդիճաքցիների վերջին հանգրվանը: Այն ֆնդիճաքցիների, որ անիծում էին Աստծուն ու հենց Աստված կանչելով՝ զոհվում: Կռվողներից շատերը, այո, մեռնում են, բայց այն-

տեղ, որտեղ չկռվեցին, կրկնակի մահ ընդունեցին:

Լուս Անջելեսում լույս տեսած «Ստեփան Ալաջաջյան. Վաստակաւոր եւ արգասաբեր գրագէտը» վերնագիրն ունեցող իր գործույուն այդ մասին իրավացիորեն գրում է նաեւ սփյուռքահայ մտավորական ու բարերար Օշին Քեշիշյանը՝ հերոսական այդ պայքարը բխեցնելով նախ եւ առաջ՝ ապրելու, արժանապատվությամբ մեռնելու եւ դրանով իսկ գոյատևելու «ամզուսպ տենչէ մը թելադրուած» (Քեշիշյան Օ., Ստ. Ալաջաջյան. Վաստակաւոր եւ արգասաբեր գրագէտը, Լուս Անջելես, 2009, էջ 18): Մեռնելով հաղթել մահին, բայց պետք էր նաեւ ապրելով հաղթել մահին: Եվ ուրեմն ով զենք էր վերցնելու, մա վեպը նաեւ մերժ-թաղվելու քարհանքներում, չէր խեղդվելու ճահճուտներում, չէր մորթվելու ձորերում:

Ազգային գոյատևման, իրենց հող ու ջրի սիրով լցված ժողովրդի արժանապատվության փրկության համար զենք վերցրած, մշակույթ ստեղծած, ընտանիք ու ավանդույթ հարգող, բարոյական բարձր չափանիշներով օժտված ու ամեն երեկո պատարագ հնչեցնող մարդկանց կյանքի պատմություն այս վեպը նաեւ մերժման խոսք է՝ ուղղված ամեն սպանդի ու ավերման, ջարդի ու բռնության, որպեսզի «Օձապտույտ երկաթուղին» որպես Անա-կոնդա վիշապած չփաթաթվի հայ մարդու մարմնին, հայոց աշխարհի «Հովիտները չամայանան», հարազատ բնաշխարհի

«Անտառների անձրեւահարսները» հարատևեն:

Հարկավ, վեպում ծավալվող դեպքերի առաջնորդ ազդակները քաղաքական ու ազգային խնդիրներն են, սակայն դա չի խանգարում, որ հեղինակը հյուսիս սիրո, ընտանիքի, երկրի ու բարքերի, նվիրյալ հոգիների ու հերոս անհատականությունների ամբողջական պատմություններ, որոնք վեպին կենսականություն են հաղորդում, ավելին՝ այն դարձնում գրավիչ, հետաքրքրական ու ասելիքով հարուստ: Գրողի երեւակայությունը թեւածում է հատկապես այն էջերում, որտեղ պատկերվում է արարող-ստեղծող հայ մարդու մտածումներն ու գործունեությունը, Հայաստան երկրի ու նրա լեռնաստանների, բերքատու այգիների ու դաշտերի, խորխորատ ձորերի, գուլալ աղբյուրների, շենքերի ու սաղարթաշատ անտառների նկարագրությունները: Եվ այդ ամենը՝ լցված անհուն մի գործվով, անկորուստ մի սիրով:

Վեպի առանձնահատկություններից է գործող հերոսների խոսքի ու նկարագրի բազմադիմությունը, նրանց գործողությունների տրամաբանական ընթացքի առկայությունը, երևույթները ճիշտ գնահատելու եւ մեկնելու հեղինակային կարողությունը, հատկանիշներ, որ յուրաքանչյուր գրողի ստեղծագործական ունակության կայուն առիավատչյան են, նրա ներաշխարհային հույզերի հարստության, կյանքի ճանաչողության, քաղաքական խորագիտության

ու մտավոր իմացությունների ապացույցները: Այս առումով Ալաջաջյանը վեպում կերտել է ընթերցողի հիշողության մեջ մնացող մարդկային բազմաթիվ տիպեր:

Ուշագրավ կերպար է Արմենակը: Հինգ որդիների, աղքատ ու թոռների տեր այդ մարդը բարի ու ազնիվ հոգի է, որ հողի ու լույսի պաշտամունք ունի, չփվող տան ու խաղաղ կյանքի երազանք: Ծակատագրի բերումով նրա ընտանիքը ցրուցան է լինում. մեկը՝ Արմաշ, մեկը՝ Երեյի, մեկը՝ Պոլիս, մեկը՝ Ֆնդիճաք...: Արմենակը գերդաստանի ներքին խորհուրդն իր մեջ ամփոփող հայ ընտանիքի սրբազան նվիրումների կրողն է, ճիշտ այնպես, ինչպես Ֆնդիճաքի տանուտերը՝ քեհյա Մինասը՝ իր որդիներով ու քաջազարմ կնոջով: Եվ պատահական չէ, որ եւ Արմենակը, եւ Մինասը զոհ են գնում թուրք կանոնավոր զորքերի հարձակմանը, քաջարի մարդիկ, որ իրենց աշյուններով դառնում են Ֆնդիճաքի դիմադրության հարատևող խորհրդանիշները:

Ինչպես վերոհիշյալ հերոսները, այնպես էլ ողջ Ֆնդիճաքը, որ առաջ աշխատում էր դաշտերում, անտառների թավուտներում, տների կտուրներին քնում, տան անդամների ու դրկիցի հետ զրուցում հողից, ցանից ու հունձից եւ աստղերի մասին հեքիաթներ հյուսում, ստիպված է զենք վերցնել՝ լավ գիտակցելով, որ ինքը հաղթելու համար չէ, որ կռվում է, այլ՝ իր պատիվը, հողը, երկիրը երաշտի պես խանձող չար ուժերից պաշտպանելու համար:

Շարունակությունը՝ էջ 7

ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ ԱՊԱՅԱՆԱԿԱՆ ՄԵԿԱՌԻԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԱՐԵՎԵԼՁԱՆ ԿԱՄ ԿԱԽԱՐԻՄԿԱՆ ԼՇԽԱՐ» ՀԵՔԻԱԹՈՒՄ

Հազարու Աղայանի 180-ամյակի առթիվ

Սկիզբը՝ թիվ 11


Արեգի վերջնական սեռափոխությունը միակ փորձությունը չէ, որին ենթարկվում է գլխավոր հերոսը. նրան սպասվում է ավելի բարդ խնդիր: Անմահական ջուր բերելու առաքելությամբ ուղարկված հերոսը, թվում է, հաղթահարել էր իրեն բաժին հասած փորձությունը, սակայն նրա համար հերթական փորձությունը դառնում են քարացածության, անշարժության մատնված, քարե արձաններ դարձած մարդկանց իրական կյանք վերադարձնելը, նրանց շարժման մեջ դնելը եւ պառավի կախարդանքից ազատելը: Փորձությունների ամբողջ ընթացքում հերոսը զրուցում է իր օգնական ձիու հետ: Արեգի ձիուն՝ Բագիկին, խոսելու կարողություն վերագրելը իրաշապատում էւ կենդանական հեքիաթի ժանրի առանձնահատկություն է: Ձին տվյալ դեպքում այլաբանորեն մարմնավորում է հերոսի օգնական կերպարը, որը դժվարին պահերին հուսադրում էր Արեգին: Հերոսի օգնական ձին օժտված է գերբնական հատկությամբ. նա արագավազ է, որի շնորհիվ Արեգը կարողանում է բավականին կարճ ժամանակամիջոցում հայտնվել իրեն անհրաժեշտ վայրում:

Հեքիաթում Արեգ-պառավ հակադրությունը չարի եւ բարու հավերժական պայքարն է: Պառավը՝ որպես քաղաքի քարացման եւ չարության մարմնացում, վայելում էր չար հոգիների աջակցությունը: Ի վերջո պառավի գործությունը պիտի ավարտվեր՝ որպես չարի պատիժ: Չար ուժերի պարագլուխ Բելիարին ոգեկոչելով՝ Արեգնազանը քարացնում է պառավին: Պառավի՝ մոգական գործությամբ օժտված գավազանը Արեգը ծովն է նետում: Այս դրվագն ակամայից հիշեցնում է Մովսես Խորենացու «Ուլունք Շամիրամայ ի ծով...» (Մույս տեղում, էջ 103) հայտնի դրվագը: Այստեղ ջուրը, իր կենսականորեն անհրաժեշտ հատկությունից զատ, դառնում է բուժման միջոց՝ ձեռք բերելով կախարդական հատկություն, հետո՝ նաեւ չարի ոչնչացման միջոց. պառավի գավազանն իր վերջնական հանգրվանն է գտնում ջրի հատակում: Եթե մեր եպոսում

Դավիթն իր պայքարի միջոցները՝ օգնական ձին, զենքը, ջրից էր ստացել, ապա այս հեքիաթում ջուրը մի դեպքում դառնում է փրկության, մյուս դեպքում՝ չարի գործությունն առիավետ ոչնչացնելու միջոց:

Հեքիաթում տեղ գտած քարացման մոտիվն ունի հնագույն առասպելական ծագում: Քարացման դրվագը տեղ է գտել նաեւ Աստվածաշնչում՝ որպես չարին պատժելու միջոց: Դովտի կնոջ անհնազանդ պահվածքը Սողոմ քաղաքից հեռանալիս նրան աղե արձան դարձնելու պատճառ է դառնում: Քարացման մոտիվը հաճախ ընկալվում է նաեւ մահվան իմաստավորմամբ, իսկ երբեմն՝ ժամանակավոր քնի: Հունական առասպելաբանության մեջ չար Նիոբեի պատիժը մույնպես քարացման մոտիվով է արտահայտված: Ապոլոնի եւ Արտեմիսի կողմից նետահարված գավակների մահը սգացող Նիոբեն վշտից քար է դառնում: Քարացած հերոսի արձանն իր վերջնական հանգրվանն է գտնում Սիպիլիոս լեռան վրա: Հատկանշական է, որ Մովսես Խորենացին, «Հայոց պատմության» մեջ հիշատակելով այս դրվագը, ակնարկում է, որ հայկական առասպելները հունականից վաղ են ստեղծվել. «Բայց եթե առասպել ավտործում ես, Շամիրամը Նիոբեից առաջ քար դարձավ» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, եր., 1968, էջ 103): Ըստ մեկ այլ ավանդապատումի՝ Նեմրոթ լեռը չար Բելի մարդկանց եւ ուղտերի քարացման հետևանքով է գոյացել (տե՛ս Դանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 74):

Փորձություններից հետո թագավորություն վերադաձած Արեգն ու Նունուֆարն ամուսնանում են: Քառասուն օր, քառասուն գիշեր տեւած հարսանիքը ներկայացված է շքեղությամբ: Այդ խնջույքին մասնակցում էր Աղավնի աղջիկն իր թույրերի հետ: Երկինքն օրհնում է Արեգի եւ Նունուֆարի միությունը եւ ծիածան կապում: Ծիածանի ի հայտ գալը հեքիաթում թերեւս պատահական չէ. «Հայոց մեջ ծիածանն ամենից հաճախ կոչվում է երկու գույների անվանումներով՝ սովորաբար կանաչ-կարմիր, երբեմն՝ կանաչ-կապույտ, ընդ որում, եր-




բեմն հավելվելով գոտի եւ աղեղ անվանումներին» (Պետրոսյան Ա., Ծիածանը հայոց պատկերացումներում. համեմատական քննություն, «Պատմաբանասիրական հանդես», 2010, թիվ 3, էջ 203): Հեքիաթի այս տեսարանում մարդիկ ծիածանը նմանեցնում են հայկական հարսանիքների ժամանակ կապվող կարմիր-կանաչին, իսկ երկնքից իջնող փերիներն ամբողջացնում են երկնային օրհնությունը եւ հողեղեն էակներից զարմացնում իրենց շնորհաբերությամբ:

Հարսանիքի տեսարանը ներքին գեղեցկություն, գունավորում է հաղորդում հեքիաթին՝ ժողովրդական նյութի աղայանական մեկնությամբ զուգորդելով հայկական ավանդական տարրեր, իսկ չափածո երգեցիկ հատվածները յուրօրինակ ռիթմ են հաղորդում հյուսվածքին: Գործողությունները զարգանում են միաժամանակ երկու տա-

րածական հարթություններում՝ երկնային եւ երկրային տիրույթներում, որտեղ երկրային մարդու ճակատագիրը կախված է երկնային էակներից:

Հեքիաթն ավարտվում է երկնքից երեք խնձոր ընկնելու ավանդական փակող բանաձեւման աղայանական մեկնաբանությամբ: «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» հեքիաթն առանձնանում է ժողովրդական հարուստ բանահյուսության եւ հեղինակային ինքնաստեղծ տարրերի յուրօրինակ զուգորդումներով: Հեքիաթի դիպաշարային զարգացումները, փորձություններով հագեցած տեսարանների ներկայացումն ու բանահյուսական մոտիվների կիրառությունները ընդլայնում են իրաշապատում այս հեքիաթի ուսումնասիրության շրջանակը:

ՑՆՈՐԱԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ



Սկիզբը՝ էջ 3

Այն վերերկրյա, վերաստեղային ոգեղեն թափառումները, որ, բախվելով իրականությանը, նրան մատնում էին ողբերգության, այստեղ վերջնականապես հանդարտվում են ու մարում.

Սիրում եմ ես նրանց, որոնք խենթ են ու անտուն
Նրանց, որոնք կայան չունեն եւ չունեն
խնդում:

Կորածներին, շրջիկներին, մանուկներին
որք
Եվ այն կանանց, որ մայում են անամոթ ու ցուփ:

Նրանց, որոնք մահն աչքերում – գիշերում
խավար
Թափառում են գաղտագողի եւ փնտրում
ավար:

Նրանց, որոնց մեռած սրտում արդեն սեր
չըկա,
Նրանց, որոնք – մահու պարտված – չար
են ու ագահ:

Ա՛խ, կուզեի ես հարազատ ու ընկեր լինել
Նրանց, որոնք մոռացված են բանտերում
անել:

Եվ կուզեի եղբայր լինել նրանց, որ մթին
Չարչարանքում կորցրել են կրակը հետին:

Եվ անառակ իմ եղբոր հետ ցանկապատի
տակ
Կուզեի ես մեռնել անբախտ ու
անհիշատակ:

Մեծ շրջապտույտը բանաստեղծին վերադարձնում է մարդկային կյանք. երկրայինը փորձեց դառնալ արտերկրային, հոգին հրթիռի պես սավառնեց, բայց երկրի ձգողականությունը ուժեղ էր: Տերյանը թեւերը թռեց երկնքում, ոտքերի վրա կանգնեց հողին: Հաջորդը 1916-ին գրած մի տրիոլետ է՝ ի պատասխան Մաքսիմ Գորկու առաջարկին՝ գրել ռուսերեն, քանի որ նրան հայերեն կարդացողների թիվը քիչ է: Չմոռանա՞նք, որ մեր ժողովրդի գլխով արդեն անցել էր 1915-ի ցեղասպանության ալիքը: Տերյանը, որը Գորկուն օգնում էր կազմելու «Հայ գրականություն» ժողովածուն (միաժամանակ Վալերի Բրյուսովին էր օգնում իրատարականության մախապարաստելու «Հայաստանի պոեզիան» անթոլոգիան) շատ ծանր է տանում Գորկու առաջարկը: Այդ կապակցությամբ արտահայտվել է մամակներից մեկում եւ, ահա, այս տրիոլետում.

Չեմ դավաճանի իմ Նվարդին
Որքան էլ դյուքես, օ, Շամիրան.
Որպես արքան այն, մանուկ Արամ,
Չեմ դավաճանի իմ Նվարդին:
Որքան փորձանք գա իմ զոհ – սրտին,
Որքան էլ փայլըդ փայե նրան
Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյուքես, օ, Շամիրան:

Գորկու հետ կապված այս միջադեպը հայտնի է եղել ժամանակին. այդ մասին ակնարկել են նաեւ հուշագիրները: Բանաստեղծական մի առանձին շարք, որ վերնագրել է «Կատվի դրախտ» (1917), անավարտ է: Ոչ այնքան սերն է, որքան աստվածացրած սիրո զահավիժումը՝ նուրբ հեգնանքի աստիճանի: Պարտիզոնում ընդգրկած երկու գործին կարող են ավելանալ հետեւյալ բանաստեղծությունները. «Դուք մի հին վեպ եք դանդաղ թերթում...», «Այնպես բարակ են Ձեր մատները, Տիկին...», «Ձեռներին Ձեր մարմարյա...», «Անվանեցեք ինձ հիմար...», «Տխրադեմ ու մտախոհ», «Ձեռներում Ձեր մանրիկ, նվագուն...»: Այդպես վարվել է Ջրբաշյանը: Կարծում եմ՝ այս շարքի տրամադրությունների շարունակությունն է «Նամակը»՝ գրված արդեն ոչ թե քնարական հերոսի, այլ քնարական հերոսուհու կողմից: Միջանկյալ նշեմ՝ Տերյանի հրածին տրիոլետների եւ այս քնքշանվաղ «Կատվի դրախտի» արձագանքները Չարենցի «Ուբնյակներ արեւին» եւ «Գալանտ երգեր» շարքերում են: Պատկերն ընկալվում է, պահպանվում, դառնում է ավանդույթ եւ մտնում է գեղարվեստական վերարծարձման ընթացքի մեջ: Վերջին շարքը, որ չհասցրեց ամբողջացնել, սոսկ առանձին գործեր տպագրվեցին մամուլում, կրում է «Երկիր Նաիրի» խորագիրը: Այստեղ Տերյանի հայրենասիրական բանաստեղծություններն են՝ հայրենիքի տեսիլքը, իրական հայրենիքի եւ բանաստեղծի անդրադարձը 1915-ի մեծ ողբերգությանը: Այստեղ Տերյանի քաղաքացիական վեհացունքն է՝ հայրենիքի գաղափարական զինվոր դառնալու աստիճանի: Սա իր հերթին մի մոր շրջադարձ է, ըստ որի, այո՛ր, պետք է մարդու երզը երգել, բայց մարդն առանց հայրենիքի ոչինչ է,

որովհետեւ տեսակը փոխվում է հակատեսակի եւ կորչում: Դեպի Հայրենիք, ներքին դիմադրությունների հաղթահարման այս ճանապարհով ընթացավ Վարուժանը, նույնը եւ՝ Տերյանը:

Ինչպես Ողիսեսը Տրոյական պատերազմից ու մեծ թափառումներից քսան տարի անց վերադարձավ հայրենիք, այդպես էլ՝ Տերյանը.

Որպես Լաերտի որդին, որպես Ուլիս մի՛ թողած եւ հող, եւ տուն,
Անցա ծովեր ու ցամաքներ ես՝
Ամեն տեղ օտար եւ անխնդում:

Ու հոգնած քայլով ահա կրկին
Վերադառնում եմ հայրենի հող,
Դեպի քարերդդ ազնիվ ու հին
Եվ խրճիթներդդ ահով միրհող:

...Ու կարոտակեզ ահա կրկին
Վերադառնում եմ, որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին երգին
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...

Այստեղ են բացառիկ իրատեսությամբ գրված այնպիսի բանաստեղծությունները, որպիսիք են՝ «Այնպես անխնդ եմ եւ նման լացին...», «Հայրենիքում իմ արմաներկ», «Դու հպարտ չես, իմ հայրենիք», «Մշուշի միջից,– տեսիլ դուրսական», «Միթե վերջին պոետն եմ ես», «Ինչպես չըսիրեմ, երկիր իմ կիզված...»:

Այս շարքում Տերյանը մորոգում է դեպի հայրենիք վերադարձի ճանապարհը: Այն օտարացումը, որ մեծ քաղաքներում նա ապրեց մարդու երզը երգելիս, հիմա, հայրենիքի ցավը ողբալիս, վերականգնեց հարազատության տաք ու հոգեբուխ ապրումներով: Այդ թանկ, շատ թանկ զգացումներով գրեց «Կարծես թե դարձել եմ ես տուն...», «Այստեղ է լացել իմ մայրը...» բանաստեղծությունները: Տան, հայրենիքի խորհրդանշանը մայրն է, իսկ իրական պատկերը՝ սա.

Մեր տունը համր ու դատարկ է,
Մեր տունը որք ու ավեր է.
Բարակ զանգակի զարկը
Լալիս է երկրիս ցավերը...
Շարունակությունը՝ էջ 8

Մեր հայտնի եւ անհայտ անձնանունները

Անձնանունները ժողովուրդի հոգեւոր ներաշխարհի յուրօրինակ դրսեւորումներն են: Հայերս, աշխարհի մյուս ժողովուրդների նման, ունենք մեր հոգեւոր կերտվածքին, անցյալի հիշատակներին ու ապագայի իղծերին համահունչ անձնանուններ, որոնք մեզ համար պատմություն, արմատներ, արյան կանչ են եւ ոչ սոսկ մարդկանց իրարից զանազանելու համար հորինված հնչյունախմբեր:

Ականավոր հայագետ Հրաչյա Աճառյանն ասել է. «Ոչ մի բան այնքան հավատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի ելեւէջները... եւ մեր ներքին ձգտումները, որքան հատուկ անունները»: Հայոց անձնանունները, իրոք, լինելով մեր ազգային արժեքների անբաժան մասը, մեծ խորհուրդ ունեն իրենց մեջ, քանզի ճշտորեն արտահայտում են մեր ժողովրդի անցած պատմական երկար ճանապարհի ողջ անցուղարձը, նրա բոլոր սրբություններն ու հիշատակները:

Հայոց անձնանունների մի մասի արմատները սկիզբ են առնում բույսերի ու կենդանիների պաշտամունքի վաղնջական ժամանակներից՝ Եզնիկ, Գառնիկ, Այծեմնիկ, Առյուծ, Արծվիկ, Հեղմար, Վարուժան, Ասպուրակ, Ասպրամ, Սոսե, Շուշան...

Անունների մի շերտն էլ կրակին, լույսին ու արեւին երկրպագող մեր նախնիների հին հավատքի նշխարներն են՝ Արեգ, Լույս, Հրայր, Հրանուշ, Հրարփի, Արեւատ, Արեւշատ, Արշալույս, Արփիար...

Հայոց հեթանոսական դիցանուններ եւ նրանցից ծնված անձնանուններ՝ Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Նանե, Վահագն, Տիրան, Տրդատ, Միհրան, Միհրդատ, Մերուժան, Նար, Նարե, Նարինե...

Մեր նախահայրերի ու մեծերի նվիրական անունները՝ Թորգոմ, Հայկ, Արմենակ, Գեղամ, Արամ, Արա, Շավարշ, Պերճ, Պարույր, Հրաչյա...

Մեր սրբազան լեռների ու գետերի, հնամյա քաղաքների անունները՝ Արարատ, Մասիս, Սիս, Արաքս, Սիփան, Վան, Սասուն, Տարոն, Վարազ, Անի...

Եվ անունների այս աստղաբույլերի մեջ առավել շողշողուն ու հզոր՝ Հայկ, Տիգրան, Մեսրոպ, Վարդան, Գարեգին, Անդրանիկ... Ամեն անուն՝ սրբագործված մեր ժողովրդի արժանավոր զավակներից մեկի սխրանքով, մեր հնամյա պատմության հերոսական մի դրվագով, դարերի խորհրդով, ամեն անուն՝ մեր հույզերի ու հույսերի թարգման ու խորհրդանիշ...

Արդեն շուրջ երկու հազարամյակ հայկական անձնանունների զգալի մասն են կազմում նաեւ աստվածաշնչյան ծագումով եբրայերենով ստուգաբանվող անունները՝ Աննա («շնորհաշատ», «ողորմած»), Դավիթ («սիրեցյալ»), Եղիսաբեթ («Աստված է երդումը նրա»), Սամվել («Աստված լսեց»), Մանվել («Աստված մեզ հետ»), Թամար («արմավենի») եւ շատ այլ անուններ:

Աստվածաշնչյան որոշ անձնանուններ էլ, թաքնվելով հնչյունափոխված բարբառա-

յին ձեւերում, երբեմն այնքան են հեռացած լինում իրենց բնօրինակներից, որ դրանց նախնական ձեւի վերականգնումը, առավել եւս՝ ստուգաբանումը, գրեթե անհնարին էին դառնում:

Նման անձնանուններից է Հյուսիսային Նախիջեւանում եւ Վայոց ձորում ժամանակին հայտնի Թեփուր (Թեփուր) անձնանունը: Առաջին հայացքից թվում է, որ այս անունը *փետուր* բառանվան բարբառային *թեփուր* ձեւը պետք է լինի, սակայն հնարավոր եմք համարում ստուգաբանության առավել հավանական այլ տարբերակ:

Հայտնի է, որ Հայաստանի գյուղերում մինչեւ անցյալ դարի վերջերը կիրառական էին աստվածաշնչյան այնպիսի անուններ, որոնք ծանոթ էին միայն քահանաներին, իսկ հասարակ մարդկանց՝ անծանոթ: Հազվադեպ կիրառական Ձեբեթ, Աբիսակ, Մամբրե, Բերսաբե, Ասանեթ եւ նման այլ անուններով, թեւեւ սակավ, անցյալում անվանակոչում էին մկրտվող երեխաներին: Հանրությանն այնքան անծանոթ են եղել այս անունները, որ երբեմն շփոթել են անգամ դրանց սեռային պատկանելությունը: Օրինակ՝ Շիրակի տարածաշրջանում ոչ հեռու անցյալում երբեմն հանդիպում էին Ձեբեթ (Հովհաննես եւ Հակոբ առաքյալների հոր անունը) արական անունով կանայք, իսկ Նախիջեւանում՝ Աբիսակ (Դավիթ թագավորի հարձի անունը) իգական անունով տղամարդիկ:

Այս անունների շարքին կարելի է դասել

նաեւ վերոհիշյալ Թեփուր (Թեփուր) անձնանունը, որը, մեր կարծիքով, նույնական է աստվածաշնչյան Դեբորա անձնանվան հետ: Հին Կտակարանում հիշատակված մարգարեուհի-դատավորուհու անունը քրիստոնեական աշխարհում բավական տարածված է եղել, իսկ անցյալ դարից հատկապես Միացյալ Նահանգներում եւ Անգլիայում խիստ կիրառական անձնանուններից մեկն է: Կարծում ենք, որ հենց Դեբորա անունն է տեղական բարբառի (Վայոց ձորի կամ Ճահուկ-Վայքի միջբարբառ) հնչյունափոխական կանոններով Թեփուր դարձել. նախ բառավերջի *ա*-ն է ընկել (ինչպես՝ Թամարա-Թամար, Լաուրա-Լավուր) երկու ձայնավորների միջեւ *բ*-ն *փ* է դարձել (ինչպես՝ Թագուհի-Թաքուհի, Թադեոս-Թաթիվոս), ապա *փ*-ի ազդեցությամբ *դ*-ն է դարձել *թ* (ինչպես՝ զորակալ-քրթակ, գտնել-քրթնիլ), այնուհետեւ՝ *ր*-ից առաջ *ո*-ն դարձել է *ու* (ինչպես՝ մորեխ-մուրեխ, Հոռոմ-Հուռում): Այսպիսով՝ Դեբորա-Դեբոր-Դեբուր-Դեփուր-Թեփուր հնչյունափոխության շղթայում նման անձնանշելի ձեւ է ստացել աստվածաշնչյան այս անձնանունը:

Մայադի անձնանունը նույնպես անցյալում հայտնի էր նույն տարածաշրջանի՝ Խոյի բարբառով խոսող բնակավայրերում: Մեր կարծիքով՝ սա էլ Մագդաղենի կամ Մագթադինե անվան հնչյունափոխված ձեւն է:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 9–11

Հայ ռազմիկներն ակտիվ մասնակցություն ունեցան նաեւ Հայրենական մեծ պատերազմի մյուս նշանավոր՝ Կուրսկի ճամատամարտում, որը տեղի ունեցավ 1943 թ. հուլիսի 5-ից մինչեւ օգոստոսի 23-ը: Կուրսկի ճակատամարտում կարմիր բանակը ոչ միայն ամբողջովին ջախջախեց հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից բաղկացած զորախմբավորումը, այլեւ ընդմիջտ թաղեց գերելսյան ստահող բարոգչության սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են հաղթելու միայն ձմռային պայմաններում: Կուրսկի աղետում կրած պարտության հետեւանքով լիովին կործանվեց գերմանաֆաշիստական բանակի հարձակողական ռազմավարությունը. գերմանական բանակն ստիպված էր ամբողջ ճակատով մեկ անցնել պաշտպանության: Այդ ճակատամարտում տարած հաղթանակի զործում ցուցաբերած հերոսությունների համար հայ ժողովրդի զավակներից շատերն արժանացան կառավարական բազմապիսի պարգևներին: Մարտերում իրենց խիզախությամբ առավել աչքի ընկան գնդապետ Գրիգոր Գալուստովին եւ լեյտենանտ Վլադիմիր Իոնիսյանին հետմահու շնորհվեց խորհրդային Միության հերոսի կոչում: Սովորովի առաջին աստիճանի զորավարական բարձրագույն շքանշանով պարգևատրվեց 11-րդ գվարդիական բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Դովիանեն Բաղրամյանը, որին շնորհվեց նաեւ գեներալ-գնդապետի կոչում: Նման պարգևի եւ ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման արժանացավ կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանցը) (*տես Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 656*):

Կարելի է առանձնացնել օդաչու ավագ լեյտենանտ Էդուարդ Բունիաթյանի անձնագրի սխարմը: 1943 թ. օգոստոսի 3-ին՝ Բելգորդի շրջանում մարտական հերթական առաջադրանքը կատարելիս, թշնամու գեներալին-հրետանային կրակից սկսվեց այրվել խիզախ օդաչուի ինքնաթիռը: Անվեհեր հայրողին չօգտվեց պարաշյուտից եւ այրվող ինքնաթիռը մխրճեց հա-



կառակորդի կենդանի ուժի ու տեխնիկայի կուտակումների վրա՝ իր կյանքի գնով ոչնչացնելով դրանք: Այդ սխրանքի համար Էդուարդ Բունիաթյանը հետմահու արժանացավ «Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանի»: Մինչ այդ նա պարգևատրվել էր նաեւ այլ շքանշաններով: Դեռեւս 1942 թ. ապրիլի 5-ին Հիտլերի կողմից հաստատված թիվ 41 դիրեկտիվում ասված էր, որ պետք է «հիմնական ուժերը կենտրոնացնել եւ արագորեն կենսագործել ճեղքումը դեպի Կովկաս», տիրանալ նրա ռազմավարական ուղիներին: Գերմանական հրամանատարության նպատակն էր խորհրդային բանակին զոկել Կովկասի հունքի հարուստ աղբյուրներից, գրավել հացահատ Կուբանը, Բաքվի ու Գորգոնու մավթը, Հայաստանի պղինձը, Վրաստանի մարգարիտները ու մյուս հարստությունները: Գերմանական գլխավոր շտաբը ձգտում էր ԽՍՀՄ-ի դեմ տրամադրել Թուրքիային եւ Կովկասի վրայով ճանապարհ բացել դեպի Մերձավոր ու Միջին Արեւելք: Այսպիսով՝ 1942 թ. հուլիսի վերջից խորհրդային բանակի հիմնական խնդիրը դարձավ Ստալինգ-

րադի ու Կովկասի պաշտպանությունը: Ավելի քան 100 000 հայրողի մասնակցեց Կովկասի համար մղվող մարտերին, որոնք սկսվեցին 1942 թ. հուլիսի 27-ին եւ ավարտվեցին 1943 թ. հոկտեմբերի 9-ին: Նրանց զգալի մասը մարտնչեց Հայկական 89-րդ, 408-րդ, 409-րդ հրաձգային դիվիզիաների շարքերում (*մույն տեղում, էջ 657*): Նրանց թվում էին նաեւ ԵՊՀ-ի բազմաթիվ ուսանողներ, ասպիրանտներ, դասախոսներ ու այլ աշխատակիցներ: Կովկասի պաշտպանության մարտում ցուցաբերած խիզախության համար խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց նաեւ ավիատեխնիկայի հրամանատար Կապիտան Սամսոն Մկրտումյանին եւ հրաձգային բրիգադի գումարտակի հրամանատար ավագ-լեյտենանտ Դուկաս Մադոյանին (*մույն տեղում*):

1942 թ. ապրիլից մինչեւ հոկտեմբեր Սեւծովյան մավթավտորոմի եւ Կովկասյան ռազմաճակատի զորքերի գործողությունները փոխհամաձայնեցնում էր ռազմաճակատի հրամանատարի տեղակալ եւ ռազմական խորհրդի անդամ նավատորմի ծովակալ Դովիանեն Իսակովը: Հոկ-

տեմբերին 4-ին Տուապսեի շրջանում նա ծանր վիրավորվեց՝ կորցնելով ձախ ոտքը, բայց կազդուրվելուց հետո շարունակեց ծառայությունը գործող բանակում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1942 թ. դեկտեմբերի 13-ի հրամանագրով ծովակալ Իսակովը պարգևատրվեց «Լենինի շքանշանով»: Կովկասի հերոսամարտի շրջանում հայ ժողովուրդը 1943 թ. փետրվարին հայրենասիրական նամակ-կոչով դիմեց ռազմաճակատում գտնվող իր զավակներին: Նամակի տակ ստորագրել էր 335 316 մարդ: Այն վառ կերպով արտահայտում էր հայ ժողովրդի ջերմ հայրենասիրությունը, հիշեցնում նրա մարտական հարուստ ավանդույթները (*մույն տեղում, էջ 658*): Ժողովուրդն իր որդիներին ու դուստրերին կոչ էր անում տուն վերադառնալ հաղթանակով: Նամակը, որ բազմահազար օրինակներով հրատարակվեց հայերեն եւ ռուսերեն, տարածվեց ոչ միայն Կովկասյան, այլեւ մյուս բոլոր ռազմաճակատներում, լայն արձագանք գտավ թշնամու դեմ մարտնչող բոլոր հայ ռազմիկների սրտերում: Պատասխան նամակում նրանք երդվեցին սուրբ պատյանը չդնել մինչեւ լիակատար հաղթանակ:

Կովկասյան ռազմաճակատների զորքերը 1943 թ. հունվարին պաշտպանությունից անցան հարձակման եւ 1943 թ. հոկտեմբերին հաջողությամբ եզրափակեցին այն: Մարտերը խորհրդային զորքերի հաղթանակով ավարտվեցին 1943 թ. հոկտեմբերի 9-ին, երբ գերմանական զորքերը վերջնականապես դուրս բըվեցին երկրամասից: Կովկասի պաշտպանության եւ ազատագրման համար ծավալված մարտերում իր կարեւոր ավանդը ներդրեց նաեւ հայ ժողովուրդը, որի նկատմամբ հիտլերյան գլխավոր շտաբի կազմած, այսպես կոչված, «Գյորիցզի կանաչ թղթապանակը» գաղտնի փաստաթղթում նախատեսված էր անցկացնել հատուկ միջոցառումներ: Նրանում մասնավորապես ասված էր, թե պետք է «հաշվի առնել առանձնապես հայերի անբարյացակամությունը մեր նկատմամբ» եւ համապատասխան վերաբերմունք ցուցաբերել (*տես Դ. Մելիքեթյան, մշվ. աշխ., էջ 13*):

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅԿԱՆԵՍ ԻՐԱՆԱՆԿԵՐՏՅՈՒ «ՊԵՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԱՐՉՎԱԾԲՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 11

Պատմիչը ելնում է ժողովրդական աշխարհընկալման հարուստ փորձից: Պատահական չէ, որ նրա երկը ժողովրդական է իր ներքին էությանը, խորքով եւ շնչով: Դրասխանակերտցու աշխատության լեզուն եւ ոճը ուսումնասիրելու համար լեզվաբաններից պահանջվում է տեմդագին աշխատանք, քանի որ այն գրեթե ուսումնասիրված չէ: Դրասխանակերտցու աշխատության բառապաշարը նաեւ աչքի է ընկնում հարուստ ու բազմատեսակ բառապաշարով: Մենք առանձնաբար անդրադարձել ենք գրաբարի դարձվածքների իմաստային եւ կառուցվածքային բնութագծերին՝ դրանց համապատասխան առանձնացնելով աշխատանքի գլուխները: Մեր հետազոտությունն ունի բավարար նորույթ եւ արդիականություն. այն հնարավորություն է տալիս անհրաժեշտ խորությամբ ծանոթանալու Դրասխանակերտցու երկուն կիրառված գրաբարյան դարձվածային միավորների կաղապարներին, որոնք արտահայտում են ժամանակի ժողովրդական մտածողության առանձնահատկությունները, հայոց աշխարհընկալման ինքնատիպությունը:

Կատարված հետազոտության արդյունքները, հավելվածում ներկայացված բառացանկը կարող են կիրառվել հայոց լեզվի պատմության, դարձվածաբանության, պատմագիտության ասպարեզներին վերաբերող աշխատություններում: Աշխատանքին կից կազմել ենք երկու հավելված, որոնցից առաջինն Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարանում» վկայված ԴՄ-ներն են, երկրորդում՝ մեր բացահայտած նորագույն դարձվածային միավորները:

Դարձվածքների ծագման եւ դասակարգման խնդիրը լեզվաբանության կարեւորագույն հարցերից է: Հայ լեզվաբանության մեջ դարձվածաբանությունը նոր զարգացող գիտակարգ է, հատկապես եթե նկատի ունենք պատմական դարձվածաբանությունը, որի հիմքում գրաբարյան շրջանի երկերում ավանդած դարձվածային միավորների տարժամանակյա քննությունն է: Լեզվաբանական տարբեր աշխատանքներում կարող ենք գտնել դարձվածքների վերաբերյալ անդրադարձներ, վերլուծություններ, սակայն

դրանք հիմնականում ընդհանուր դիտարկումներն են, որտեղ դարձվածքները կարող են քննվել հարադիր բոլոր միավորների հետ մեկտեղ: Դարձվածքների առաջացման, բառապաշարի այլ միավորներից նրանց տարբերող հատկանիշների, իմաստակառուցվածքային յուրահատկությունների, ոճական եւ բովանդակային բեռնվածությունը վերաբերյալ առանձին հիմնարար աշխատություններ՝ հատկապես տարժամանակյա կտրվածքով, դեռեւս սակավ են:

Լեզուն ազգային մշակույթի հայելին է, որտեղ խոսքային մակարդակում կարեւորագույն դեր ունեն դարձվածային միավորները եւ դարձվածային արտահայտությունները: Դարձվածքների ուսումնասիրությունը սերտորեն առնչվում է նաեւ հարլեզվաբանական գիտակարգերի հետ, որովհետեւ դարձվածքները յուրաքանչյուր ժողովրդի ազգահոգեբանության կարեւոր նշույթներն են:

Ցայսօր մասնագիտական գրականության մեջ չի ձեւավորվել միասնական ընդհանուր մոտեցում դարձվածքի էական տարբերակիչ հատկանիշների, դարձվածաբանության ընդգրկման սահմանների վերաբերյալ: Առկա է դարձվածային միավորների լայն եւ նեղ ըմբռնման խնդիրը:

Ընդհանրապես բանավիճային է դարձվածքի սահմանումը. ԴՄ-ների եւ բառապաշարի մնացյալ միավորների ընդհանրությունների եւ տարբերությունների քննությունը միարժեք մեկնաբանություններ չունի:

Մի շարք մասնագետներ դարձվածաբանությանն են վերագրում զուտ բառին համարժեք այնպիսի իմաստաբանական միավորների քննությունը, որոնց հատուկ են վերաիմաստավորումը եւ փոխաբերականությունը: Իսկ որոշ այլ մասնագետներ բուն դարձվածային կապակցությունների հետ դարձվածաբանության ուսումնասիրության շրջանակներում ընդգրկում են առանասացվածքային արտահայտությունները, թեւավոր խոսքերը, բարդ կամ բաղադրյալ եզրույթները:

Անհրաժեշտ է նշել, որ դարձվածքների սահմանների որոշման անկայունությունը, դարձվածային միավորների ոչ հստակությունը պայմանավորված են դարձվածքների սահմանումների

ընդհանրականության եւ դարձվածային միավորների տարբերական կայուն չափանիշների բացակայության հանգամանքներով:

Դարձվածքները, դիտարկվելով որպես խոսքային միջավայրում առաջացած եւ լեզվի բառապաշարում կրկնվող կիրառությունների շնորհիվ ամրակայված կայուն կապակցությունների ամբողջություն, սահմանվում են որպես բառային այնպիսի անբաժան, իմաստով ամբողջական կապակցություններ, որոնք խոսքի մեջ վերարտադրվում են իբրեւ խոսքային պատրաստի միավորներ:

Վերջին տարիներին նշանակալիորեն աճել է դարձվածաբանական համեմատական ուսումնասիրությունների համընթե տարբերությունը, որը հաստատվում է մի շարք հետազոտությունների առկայությամբ: Դրանք թույլ են տալիս ավելի ճշգրիտ սահմանել այդ միավորների ուսումնասիրության առարկան, ճյուղերը եւ մեթոդները:

Յուրաքանչյուր լեզու հարուստ է եւ անկրկնելի իր գրական-մշակութային արժեքներով, պատմությամբ եւ լեզվակիր ժողովրդական իմաստությամբ: Աշխարհի տարբեր ժողովուրդների պատմությունը, հոգեւոր մշակույթը եւ ավանդույթները հստակ ըմբռնելու համար հարկ է ուշադրություն դարձնել ժողովրդական հեքիաթների, թեւավոր խոսքերի, դարձվածային միավորների, առանձնների եւ ասացվածքների վրա (տես Մարգարյան Ալ., *ժամանակակից հայոց լեզու. Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն, Ե., 1990, էջ 48–51*):

Դարձվածքը կառուցվածքով երկու եւ ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որը խոսքում վերարտադրվում է իբրեւ լեզվական պատրաստի միավոր:

Ժամանակակից հայերենում դարձվածքը հաճախ անվանում են դարձվածաբանական միավոր, դարձվածաբանական արտահայտություն, հատուկ ոճ, որոշ դեպքերում նաեւ՝ իդիոմ կամ իդիոմային արտահայտություն:



Լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա դարձվածքի կամ դարձվածաբանական միավորների տարբերական, դարձվածաբանության ընդգրկման սահմանների վերաբերյալ: Դարձվածաբանության ավելի լայն ըմբռնման կողմնակիցները դարձվածքների մեջ ներգրավում են առանձները, ասացվածքները, աֆորիզմները, թեւավոր խոսքերը, հարադրությունները, բարդ հարադրական շաղկապները, բառակապակցական եզրույթները, մյուսները՝ դարձվածաբանության ավելի նեղ ըմբռնման կողմնակիցները, հրաժարվում են վերոհիշյալից եւ դարձվածքներ են համարում միայն իդիոմային արտահայտությունները:

Շարունակությունը՝ էջ 8

Մեր հայտնի եւ անհայտ անձնանունները

Սկիզբը՝ էջ 5

Խոյի բարբառին որոշ դիրքերում (հիմնականում՝ ձայնորդներից եւ որոշ խոլերից առաջ) բնորոշ է *գ, կ, ք > յ* հնչյունափոխությունը (ինչպես՝ օգնել > օյնել, հագնել > հայնել, աքլոր > ալլոր, օգտվել > օյտվել եւ այլն): Այստեղ էլ, փաստորեն, առկա է Մագդաղեմի > Մագթաղի > Մայթաղի հնչյունափոխական շղթան:

Աստվածաշնչյան Աբիսակ իգական անունը որոշ շրջաններում արական անվան մշակակությամբ ստանալու հանգամանքը կարելի է բացատրել Միսակ, Սիսակ անունների համաբանությամբ: Հնարավոր ենք համարում նաեւ անձնանունը որպես Աբիսողոմ անվան կրճատ ձեւ ընդունելու վարկածը:

Կայսենիկ անձնանունը թերեւս կարելի էր ստուգաբանել Արփենիկ, Վարսենիկ անձնանունների համաբանությամբ հորինված անձնանուն, որի արմատը, ամենայն հավանականությամբ, կասիա (դարիճենիկ) ծառանունն է: Սակայն վերջին ձեւը, որը Գ. Ջահուկյանը բխեցնում է պահլավերեն *դար-ի չենիկ* («կիմամոն», «դարչին», բառացի՝ «չիմական փայտ») եւ պարսկերեն *դար-ի-չինի, դարչինե* ձեւերից, հայերենում ունեցել է նաեւ *դարիսեն, դարսենեկ, դարսենիկ(կ)* եւ այլ ձեւեր: Վերջին ձեւերը հուշում են, որ անձնանունը, ամենայն հավանականությամբ, կարող ենք դիտարկել որպես վերոհիշյալ ծառանվան *կասիա* եւ *դարսենիկ* ձեւերի բաղադրություն, մասնավորապես որ երկու նույնանիշ բառերի միախառնմամբ մեր բառի կազմման այս երևույթը (բաղադրություն) բնորոշ է հայ-հուկ-Վայքի միջբարբառին, եւ առկա են համանման այլ օրինակներ՝ ծանոն + մաստակ > ծանդաք, մանգաղ + գերանդի > մարանդի, տոտիկ + ոլթ > տօթթ եւ այլն:

Որքան էլ զարմանալի լինի, հայոց մեջ բավական հայտնի Հերիքնազ անձնանունը նույնպես կարելի է դասել բնօրինակից հեռացած՝ վերոհիշյալ բարբառային անձնանունների շարքին, չնայած Հ. Աճառյանն այն ստուգաբանել է որպես «հերիք ինչքան մազ ես անում» բառակապակցության ամփոփված ձեւ: Հետաքրքիրն այն է, որ այս անձնանվան այլ՝ ավելի հավանական ստուգաբանության տարբերակի մասին են հուշում հենց մեծ լեզվաբանի կողմից *մազ* արմատով մի ամբողջ շարք անձնանունների ստուգաբանությունների մախադեպերը: Օրինակ՝ Մելքնազ անձնանունը Հ. Աճառյանը ստուգաբանում է որպես «հրեշտականազ» բխեցնելով արաբերեն *մելեթ* («հրեշտակ») եւ պարսկերեն *մազ* («մազ», «նազանք») բառերից, Գյուլնազը՝ որպես «վարդի նման մազելի», պարսկերեն *գուլ* («վարդ») եւ *մազ* բառերից, Սալվինազը՝

որպես «նոճու մազ(անք) ունեցող», պարսկերեն *սարվ* («նոճի») եւ *մազ* բառերից, Արեգնազը՝ «արեւի մազ(անք) ունեցող», հայերեն *արեգ(ակ)* եւ *մազ* բառերից եւ այլն: Պարսկերենում նույնպես առկա է *մազ* արմատով իգական անձնանունների մի ամբողջ շարք՝ Մահինազ՝ «լուսնի մազ(անք) ունեցող» (*մահ* («լուսին»)) եւ *մազ* արմատներից, Գուլնազ՝ «վարդի մազ(անք) ունեցող» (*գուլ* («վարդ»)) եւ *մազ* արմատներից, Փարինազ՝ «փերու մազ(անք) ունեցող» (*փարի* («փերի»)) եւ *մազ* արմատներից, Հահնազ՝ «արքայական մազ(անք) ունեցող» (*շահ* («արքա»)) եւ *մազ* արմատներից) եւ այլն:

Այս կազմությունները, ամենայն հավանականությամբ, հուշում են, որ Հերիքնազ անձնանունը մախապես ունեցել է Հիրիկնազ («հիրիկի մազ(անք) ունեցող») ձեւը, այնուհետեւ ժողովրդական ստուգաբանությամբ Հերիքնազ է դարձել եւ մեկնաբանվել վերոհիշյալ՝ «հերիք ինչքան մազ ես անում» իմաստով: Այս վարկածը հաստատում է նաեւ այն հանգամանքը, որ հիրիկ ծաղկանունը վկայված է գրաբարում, եւ հայկական անձնանունների ցանկում որպես առանձին անուն առկա է նաեւ Հիրիկ անձնանունը, ավելին՝ բարբառային *զամբեղ* (Վան), *բարբուսնակ* (Մուշ) եւ այլ ձեւերի կողքին զազայերենում հայտնի է *հերիկ* տարբերակը,

որն ամենայն հավանականությամբ՝ փոխանություն է հայերենի Դերսիմի բարբառից: Հ. Աճառյանը նաեւ հնարավոր է համարում այս ծաղկանվան եւ հիր («հակնթագույն») գունանվան կապը, մասնավորապես որ սանսկրիտում առկա է հարի («դեղնականաչ»), լատիներենում՝ պուրպուրա, եւ հունարենում՝ պորֆուրա («յասամանագույն») գունանունը. սրանք համեմատելի են միմյանց հետ, ինչպես նաեւ հունարենի իրիս («հիրիկ») եւ հին պարսկերենի խիթ («մեխակ») ծաղկանունների հետ:

Ավելացնենք, որ հայկական անձնանունների մեջ քիչ չեն նաեւ պարզապես *մազ* արմատից ածանցված բազմաթիվ այլ անձնանուններ՝ Նազիկ, Նազե, Նազելի, Նազենի(կ), Նազան(ի) եւ այլն, որոնցով հայ աղջիկներին դարեր շարունակ անվանակոչել եւ այսօր էլ անվանակոչում են մրանց մեջ հենց մազելիություն, հմայք տեսնելու ակնկալիքով:

Այսպիսով՝ հայոց անձնանունների աստղաբույլում քիչ չեն նաեւ բարբառային տարբերակները, որոնց բնօրինակ ձեւերը կարելի է վերականգնել՝ հաշվի առնելով տվյալ բարբառի հնչյունափոխության օրենքները:

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Արեւմտահայոց խաչելության պատումը

Սկիզբը՝ էջ 4

Ուշագրավ է, որ երբ կենդանի մնացած ֆնդիճաքցիները, որոնք քշվել էին Իսլահիեի գաղթականաց, ամեն ինչ ոչնչացնող երաշտից հետո առաջին անձրեւն են տեսնում, բոլորը դուրս են թափվում իրենց գետնափոր հյուղերից ու կանգնում անձրեւի տակ՝ ամեն մեկը դառնալով յուրովի խաչ-անձրեւահարս. *«Նանեն մրանց էր մայում ու թվում էր տեսնում է հարյուրավոր անձրեւահարսներ, խրտվիլակներ, որոնք ցնցոտիներ էին հագել ու թեաքաց թրջվում էին: Խաչափայտեր էին, փոքրիկ, գետնի վրա հազիվ մեխված կամ օրորվող, կնճռոտած, հնամաշ»*:

Խմում էին անձրեւը:

...Ո՛հ, դեմքերի վրա միայն անձրեւը չէր, այլեւ արտասուք...» (Ալաջաջյան Ստ., *Չսպիացած վերք, հ. III, գիրք 1-ին, Երեւան, 1993, էջ 220–221*):

Վեպում հանդես են գալիս բազում գործող անձինք՝ աշխատավոր մարդիկ, մտավորականներ, քաղաքական ու հասարակական գործիչներ, պաշտոնյաներ, զինվորականներ, կառավարիչներ, կրոնավորներ... Նրանց մի մասը վեպում կերպավորման աստիճանի է բարձրացված, մի քանիսի վերաբերյալ հեղինակը լոկ անդրադարձումներ կամ հիշատակումներ է կատարում: Քիչ չեն նաեւ պատմական անձնավորությունները, որոնք հանդես են բերվում երբեմն որպես ծավալվող գործողությունների մասնակիցներ՝ Կոմիտասը, Ջոհրապը, Յոհաննես Լեփսիւսը, Մաղաքիա Օրմանյան եւ Ջավեն Եղիայան պատրիարքները, թուրքական իշխանությունների մի շարք առաջնորդներ, Թուրքիայում գերմանական դեսպանության աշխատակիցներ, երբեմն էլ լոկ որպես անուններ՝ Պողոս Նուբար Փաշան, Հալեպի հյուրանոցի տնօրեն Օմնիկ Մազլունյանը, Ռուբեն Ջարդարյանը, Նազարեթ Տաղավարյանը, գերմանացի, անգլիացի, ֆրանսիացի զանազան պաշտոնատար գործիչներ ու օտարերկրացիներ, որոնցից մեկն էլ հայատյաց ֆրանսիացի Պիեռ Լոթեն է, որը կովկասյան ռազմաճակատում թուրքերի կրած նահանջը իր հողվածներում պատճառաբանում էր հայերի դասալքությամբ (*Լոթենի մասին հետազայում նողկանքով է արտահայտվել նաեւ Շ. Շահնուրն իր «Ֆրանսահայ տողանքը» գրությունում: Տե՛ս Շահնուր Ե., Երկեր, Եր., 1985, էջ 137*):



Վեպում ծավալուն տեղ է հատկացված Կ. Պոլսի երկու պատրիարքներին՝ հանձինս մրանց կերտելով իրենց ժողովրդի ճակատագրով ապրող ու տառապող կրոնավորների գրավիչ կերպարներ: Բռնությունների ու քաղաքների այդ ծանր տարիներին մրանք ծավալում են դիվանագիտական, քաղաքական ու ազգային հանրօգուտ գործունեություն, անում ամեն ինչ՝ մեղմելու թուրք մարդկերների մտադրություններն ու հայատյացությունը, ջանում մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել արեւմտահայոց նկատմամբ կիրառվող հալածանքներին: Եվ այդ ամենը՝ շաղախված մրանց մերաշխարհում կատարվող հոգեկան ծանր տվյալամբներից հետ:

Ալաջաջյանը հատկապես ջերմորեն է արտահայտվում Մ. Օրմանյանի նկատմամբ, անդրադառնում ոչ միայն մրա ազգային ու կրոնական գործունեությանը, այլեւ պատմագրական արժեք ունեցող «Ազգապատում» աշխատությանը (*Մ. Օրմանյանի այս գործի մասին Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը գրել է, որ այն «Հայաստանայց եկեղեցւոյ ալեկոծ. այլ հերոսական բազմադարեան կեանքի պատկերն» է*:

Տե՛ս Մ. արք. Օրմանեան. «Ազգապատում», Մ. Էջմիածին, 2001, «Երկու խօսք»): Վեպում հեղինակը մի քանի անգամ է անդրադառնում այդ գործին, իրավացիորեն շեշտում, որ այն հավաստի մի ասք է կառուցվող ու կանգուն հայոց վամբերի, զարգացող դպրության, կրոնավորների նվիրման, ծաղկվող գրքերի ու մագաղաթների եւ այդ ամենն ստեղծող ժողովրդի մասին:

Վեպում պատկերվող գործողությունների մի ահագին մասը Կ. Պոլսում է ծավալվում: Կատունների այդ քաղաքում (ըստ ավանդյոթի՝ կատուն էր փրկել Մուհամմեդին օծի խայթոցից) հայոց եղեմնի մախասպանդանոց այդ ոճրատանն է հյուսվում գեհեմը: Մարմարայի ափի յոթ բլուրների վրա տարածված քաղաքի գեղատեսիլ բնության հակադրությամբ Ալաջաջյանը մերկացնում է թուրք բռնակալության քաղաքական, ռազմաճակատական ու ազգայնաճակատական ողջ էությունը, պատկերում այն գաղջ մթնոլորտը, որի մեջ հայտնվել էին քաղաքի հույն, հայ, հրեա եւ այլ ոչ մուսուլման բնակիչները: Տպավորիչ են հատկապես թուրքական կառավարական շրջանակներում տիրող խարդավանքների, մեծգությունների ու

ստորությունների վերհանումները, որոնք հաստատում են մի բան. ողջ Թուրքիան է թաղված աղբի ու ցեխի մեջ, եւ դրանցից դուրս գալու ճանապարհներ չկան:

Հավաստի գույներով են ներկայացված ստամբուլահայության նաեւ հասարակական, քաղաքական, կրոնական ու ազգային հարաբերությունները, որտեղ ազնիվ հոգիների կողքին գոյատևում են նաեւ սնանկ մարդիկ, որոնք անտարբեր ու անհոգ են ծավալվող ողբերգական իրողությունների հանդեպ: Սրան հակառակ՝ գրողը ցույց է տալիս, որ գավառի հայ մարդը մման է իր բնաշխարհին. մրա մման շոյալ է, բարի ու ազատասեր:

Ալաջաջյանի գրիչը դառնում է զեղուն, ձեռք բերում քնարականություն հատկապես այն հատվածներում, որոնք վերաբերում են բնաշխարհի ու եզերքի պատկերումներին, Լեռնային Կիլիկիայի անտառների, լեռնաստանների, խորխորատների, ուխտատեղիների ու սրբատեղիների նկարագրություններին: Պակաս գրավիչ էջեր չեն Գինդ–Բերթա փոխհարաբերություններն արտացոլող էջերը, իսկ մրանց զգացումների խորքը պատկերող դրվագներն աչքի են ընկնում թարմությամբ ու գրավչությամբ:

Վեպում թուրք իշխանությունների ու կառավարության ներկայացուցիչների, այդ թվում եւ կառավարման ցածր օղակներում գտնվող եւ անգամ թուրք կանանց ընդհանրական կերպավորումներն առանձնանում են վարքագծի, մտածողության ու գործունեության սպառիչ բնութագրումներով, որտեղ հատկապես շեշտվում են կենդանակերպ այդ մարդկերների դաժանությունն ու լկտիությունը, մրանց մեջ արդարության ու խղճի իսպառ բացակայությունը, հայատյացության առկայությունը, որը դարերի խորքերից է գալիս եւ շարունակվում բոլոր սերունդների բնազդների մեջ: Այդպիսի մի արարած է Հալիդե Էդիպը: Հասարակական ու քաղաքական գործիչ այդ տիկիկը, որ բանաստեղծուհի էր նաեւ, ոչ միայն թուրք խառնամբոխներին ջարդի մղող պատգամներ է տալիս, այլեւ անձամբ շրջում է երկրով մեկ՝ հայ երեխաների թլպատումները կազմակերպելու համար:

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐՂՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ԴԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Սկիզբը՝ էջ 6

Իհարկե, ֆաշիստական պարագլուխներն այդ հարցում միանգամայն ճիշտ կռահում էին կատարել, քանի որ մեր ժողովուրդը չէր մոռացել ու երբեք չի մոռանա, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարությունը Հայոց մեծ եղեռնն իրականացնելիս ոգեշնչվել ու աջակցություն էր գտել հենց գերմանական իմպերալիստներից։ Ուստի երբ հիտլերյան զորքերը մոտեցան Անդրկովկասի դարպասներին, ամբողջ հայ ժողովուրդը, նրա բազմահազար ռազմիկները հավատարմո՛ւ-



րեն կանգնեցին Կովկասի պաշտպանների շարքերում։ Այդ մարտերում աչքի ընկավ հատկապես 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան՝ իր հրամանատարներ Անդրանիկ Սարգսյանի, Արտաշես Վասիլյանի եւ Նվեր Սաֆարյանի ղեկավարությամբ։ Այդ դիվիզիան 1943 թ. հոկտեմբերի 9-ի հրամանագրով արժանացավ «Թամանյան» պատվավոր կոչման։ Կովկասի համար մղված մարտերում հայ ռազմիկները զանգվածային հերոսություններ կատարեցին՝ անմահացնելով իրենց անունները, բարձր պահելով մեր ժողովրդի պատիվն ու փառքը։ Այսպես՝ ավագ սերժանտ Յուլիան Ավետիսյանը 1943 թ. սեպտեմբերին՝ Դոլգայա բարձունքը գրավելու ժամանակ, գիտակցորեն գնաց դեպի մահ, կրծքով փակեց թշնամու դռնի գնդացրային հրակնատը եւ ապահովեց իր ստորաբաժանման առաջանցումը, որի համար ետմահու արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ զինված ուժերի նախարարի հրամանով՝ նրա անունը առհավետ գրանցվեց այն վաշտի անձնակազմի ցուցակում, ուր նա ծառայել էր։ Բացի Հ. Ավետիսյանից՝ նման անձնագրիություն է կատարել եւս երեք հայ մարտիկ՝ ավագ սերժանտներ Սուրեն Առաքելյանը, Ապակեն Ռոստոմյանը եւ գերմանական գերությունից փախած ու իտալական պարտիզանական շարժման մեջ ընդգրկված Գեորգ Քոլոզյանը (*Նույն տեղում*)։ Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար 10 հայրորդու եւ Հայաստանում ծնված մեկ հույնի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։

Թամանյան թերակղզու ազատագրմամբ վերջնակա-

նապես վերացվեց գերմանական զորքերի այն կարեւոր հենակետը, որը հնարավորություն էր ընձեռում նրանց՝ իրենց ձեռքում պահելու Դրիմը։ Ուստի դրանից հետո օրակարգում դրվեց Դրիմի ազատագրման հարցը, եւ 1944 թ. մայիսին այն լիովին մաքրվեց ֆաշիստական հորդաններից։ Այդ մարտերում եւս աչքի ընկավ Թամանյան դիվիզիան, որի հինգ ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման։

Կովկասի եւ Դրիմի համար ծավալված մարտերից առաջ ու դրանց զուգընթաց Հայրավարենտյան ռազմաճակատի զորքերն իրականացնում էին նաեւ Ուկրաինայի ազատագրումը։ 1943 թ. օգոստոսի վերջերից մինչեւ 1944 թ. վերջերը Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ ուկրաինական ռազմաճակատների զորքերը գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեցին Ուկրաինան։ Այդ ռազմաճակատների զորքերի կազմում մարտնչել է շուրջ 80 000 հայ ռազմիկ, այդ թվում նաեւ՝ համալսարանականներ։ Եթե դրան ավելացնենք նաեւ 1941–1942 թթ. Ուկրաինայի պաշտպանական ծանր մարտերին մասնակցած հայերի թիվը, որը կազմել է ավելի քան 20 000, ապա Ուկրաինայի համար մարտնչած հայերի թիվը կանցնի 100 000-ից։ Նրանցից ավելի քան 30 000-ը զոհվել է մարտերում (*տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 659*)։ Այդ մարտերում իր սիրաբերով առավել աչքի ընկած 21 հայ խիզախի շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում։ 1943 թ. նոյեմբերի 6-ին առաջինների թվում Կիեւ մտան 50-րդ հրաձգային կորպուսի զորամասերը։ Կորպուսի հրամանատարն էր գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը, որն արժանացավ «Լենինի շքանշանի»։ Մարտերում աչքի ընկավ հատկապես 409-րդ դիվիզիան, որն ստացավ Կիրովգրադյան անվանումը։ Այն Հայրենական մեծ պատերազմն ավարտեց Չեխոսլովակիայում, ապա մասնակցեց միլիտարիստական ճապոնիայի ջախջախմանը։

Գեներալներ Սարգիս Մարտիրոսյանի եւ ԵՊՀ-ի ռազմագիտության ամբիոնի վարիչ Անդրանիկ Ղազարյանի հրամանատարությամբ գործող միավորումներն առաջինների թվում անցան Դնեպրը, մասնակցեցին Կիեւի եւ այլ քաղաքների ու մարզերի ազատագրմանը։ Դնեպրի անցման համար մոտ 2000 ռազմիկ արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, որից 18-ը հայեր էին (երկուսը՝ համալսարանականներ՝ Անդրանիկ Ղազարյան եւ Սուրեն Սարգսյան)։


Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՑՆՈՐԱԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 3, 5

Համաշխարհային վիշտը, անհատին պաշարած թախիծն այստեղ մի նոր կերպարանք են ընդունում, եւ դա դարերի խորքից հնչող ազգային ողբն է, որի դեմ թեւ առարկեց, բայց դարձավ հերթական ողբերգակներից մեկը.



Երկիր Նաիրի, երազ հեռավոր, Քնած ես քնքուշ թագուհու նման. Միթե ես պիտի երգեմ քեզ օրորել արքայական դնեմ գերեզման. Եվ միթե, միթե սիրտըս ավերված Ավերակներդ լոկ պիտի պարզեմ, Քո տեղ փայփայեմ ստվերդդ մեռած, Քո սուրբ խոսքի տեղ իմ լացը լսեմ...

Եվ, ի վերջո, պահպանվել է «Փշե պսակ» սեւագիր շարքը, որ նոր կյանքի ավետիսն է բերում։ Քրիստոսը՝ որպես նոր հավատի քարոզիչ, արժանացավ հալածանքի ու փշե պսակի, ինչպես եւ նոր գաղափարների առաքյալներն ու մարտիրոսները։ Տերյանն իրեն վերագտնում է Քրիստոսի կերպարի մեջ։ Չմոռանա՞նք եւ կրկնենք՝ Տերյանն այս տարիներին, այս շարքը գրելիս կոմունիստ էր, բայց ի՞նչ բոլշեվիկ։ Իսկ տարբերությունը շատ մեծ է։

Տերյանի բանաստեղծությունների մեծ մասը շարքերից դուրս են։ Չապրեց, չհասցրեց վերջնական դասավորությամբ ի մի բերել մի գրքի մեջ։ Այդ իսկ պատճառով «Երկիր Նաիրի» շարքը տարբեր կազմողներ (Մալինյան, Ռ. Ջարյան, Պարտիզունի, Ջրբաշյան) տարբեր ընդգրկումներով են ներկայացնում։

Շարքերի մեջ չմտած բանաստեղծություններից պարզվում է, որ Տերյանը մտադիր է եղել ստեղծել «Քաղաքի երգեր» վերնագրով շարք, որի մեջ պետք է մտնեին «Քաղաք» վերնագրվածը («Քաղաք» վերնագրով ունի երկու բանաստեղծություն)։ Իրենց տեղը պիտի գտնեին «Սիրելի Պառլո Մակինցյանին» («Եկան օրեր ու անցան ու ինձ ոչինչ չմնաց...»), «Եթե սեր չըկա – ինչի համար...», «Նույն է հասցեդ հնամյա...», «Մենք բոլորըս, բոլորըս // Մանուկներ ենք որբ...», «Ցուրտ Յոկտեմբերն է ծեծում իմ դուռը...», «Հրաժեշտի գազել» բանաստեղծությունները, ավելի պիտի ամբողջանային թվարկված շարքերը, հատկապես թերիները եւ իր կողմից չհավաքվածները։

Տերյանը ոչ մի «անկապ» բանաստեղծություն չունի։ Նրա ամբողջ պոեզիան ունի ներքին բովանդակային միասնություն, զարգացում եւ հաջորդականություն։ Գործում է քնարական դիպաշար հասկացությունը, որ այլ բան չէ, քան ապրումների պատմություն։ Այս տեսակետից, իհարկե, տրամաբանորեն կարելի է Տերյանի՝ շարքերից դուրս գտնվող բանաստեղծությունները խմբավորել կամ կցել որեւէ շարքի (կցել եւ ոչ թե միացնել)։

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՐԱՆԻԱՆԿԵՐՏՅՈՒ «ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԻԶՎԱԾԷՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Հայերենում դարձվածքները բաժանվում են չորս խմբի՝ դարձվածքի ընդհանուր իմաստի եւ դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի միջեւ գոյություն ունեցող հարաբերության տեսակետից։

Դրանք են՝

- դարձվածքային սերտաճում,
- դարձվածքային միասնություն,
- դարձվածքային կապակցություն,
- դարձվածքային արտահայտություն։

Դարձվածքային սերտաճում։

Այս խմբի մեջ են դասվում այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից։ Դրանք իմաստային տեսակետից անբաժանելի, անքակտ կապակցություններ են։ Նրանցում բառերը, ամբողջապես կորցնելով իրենց բառային իմաստները եւ տվյալ կառուցվածքում վերաիմաստավորվելով, դառնում են դարձվածքի ընդհանուր, ամբողջական իմաստի բաղադրատարր՝ չցուցադրելով իրենց բառային եւ իմաստային ինքնուրույնությունը. ինչպես օրինակ՝ *Չբռամբ ասծել* – տիրանալ, *տալ տեղի բանից* – համաձայնել, *ծեռս լքանել* – վիատվել։

Դարձվածքային միասնություն։

Դարձվածքների այս խմբի մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ, որոնք դարձվածքային սերտաճումների մնա-

նաժամանակ անբաժան են եւ ամբողջական, բայց ի տարբերություն նախորդների՝ սրանց դարձվածքային *ընդհանուր* իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով։ Դարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը։ Օրինակ՝ *ի գլուխ ելանել* – ավարտվել, ամբողջանալ, *զսիրտ կակղել* – գուրջ շարժվել։

Դարձվածքային կապակցություն։

Դարձվածքային կապակցություններ են կոչվում դարձվածքային այն միավորները, որոնց ընդհանուր իմաստն ամբողջովին բխում է նրանց բաղադրիչ բառերի իմաստներից։

Դրանք այնպիսի դարձվածքներ են, որոնց կազմի մեջ մտնող բառերն ունեն ինչպես ազատ, այնպես էլ դարձվածաբանորեն կապված գործածություն։

Այդ կարգի դարձվածքներում բաղադրիչները՝ դարձվածքը կազմող բառերը, հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, բայց իրենց կապերով մնում են կախյալ վիճակում։ Օրինակ՝ *գրգռել աղմուկ* – աղմուկ, խռովություն առաջացնել, *կեանս շնորհել* – կյանք պարգևել։

Դարձվածքային արտահայտություն։

Դարձվածքային արտահայտություն են համարվում կայուն այն դարձվածաբանական միավորները, որոնք իմաստային տեսակետից

ոչ միայն անբաժանելի չեն, այլեւ կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից. դարձվածքի ընդհանուր իմաստը կախված է եւ բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից, դարձվածքի բառային կազմը եւ դարձվածքային իմաստը կայուն են։ Օրինակ՝ *արկանել զսուր թշնամութեան* – խիստ թշնամանալ, *շոգմոզել շողոմութեամբ բանիւ* – շողոքորթել դատարկախոսությամբ, կեղծավորաբար։

Դարձվածքային արտահայտությունների թվին են դասվում.

- *գրական* ծագում ունեցող թեավոր խոսքերը, հեղինակային դիպուկ արտահայտությունները, ինչպես օրինակ՝ *Աստուծային Գիր* – Աստվածաշունչ, *հօտ Տեառն* – Աստուծո հոտը, հավատացյալները, *հանգչել ի Քրիստոս* – մեռնել, *յաւտեանս յալիտենից* – հավերժաբար։
- ժողովրդական խոսակցական անձեռները, մաղթանքները, օրհնանքները, որոնք պատկերավոր բնույթ ունեն եւ փոխաբերական իմաստ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների, ինչպես՝ *անծիակուր առնել* – չառաչար անծիլ, *սէր դնել* – միաբանություն հաստատել։

— առածասացվածքային արտահայտությունները, որոնք վեր են ածվել դարձվածքների, ինչպես՝ գայլի գլխին ավետարան կարդալ, երկաթը տաք-տաք ծեծել, ճտերը աշմանը հաշվել (տե՛ս Սուքիասյան Ա., *Ժամանակակից հայոց լեզու. Հնչյունաբանություն*,

բառագիտություն, բառակազմություն, Եր., 1989, էջ 91–93)։

Հովհ. Դրասխանակերտցու երկում մման գրաբարյան դարձվածքներ չենք գտել։

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբուլյան Գրանցման վկայական՝ 624 Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Հեռախոս՝ 517 197 Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am astghikstam@gmail.com web կայք՝ krishayas.wordpress.com Ստոր. տպագր. 30.06.2020 թ. Տպաքանակը՝ 1175
